ISSN 1829-0469
ISSN 2579-2687

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
Yerevan Komitas State Conservatory
Ереванская государственная консерватория им.Комитаса

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (220)

#4 ապրիլ 2024

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 109-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

109
Հիշում եմ և պահանջում

Հայաստանի Հանրապետությունում Արաբական Միացյալ Էմիրությունների Դեսպան դոկտոր Նարիման Ալմուլլան այցելեց ԵՊԿ

8

Մեկնարկել է Ք.Պենդերեցկու անվան ժամանակակից երաժշտության փառատոնը

2

Վլադիլեն Բալյան. մտքի եւ գործի հարյուր տարվա միություն

Ա. Սպենդիարյանի փուն-թանգարան

3

«Եվ անչկայրյայկ ի քեզ հուսամ, Հայաստա՛ն». Աննա Մայիլյանի դասարանը ներկայանում է Հայրենիքին նվիրումներով

Աննա Մայիլյանի դասարանի համերգը

5

Եվրոպայի ամենաստեղծարար եւ փնտրված դաշնակահարուհիներից մեկը՝ Մարիաննա Շիրինյանը Պրահայում. Գրիգին հազորդեց Բաբազանյանը

Մարիաննա Շիրինյան

9

Երեք համերգ՝ պուսահայ հանրության համար

Դիանա Հարությունյան և Արթուր Պաղտասարյան
Մարգարիտ Սարգսյան

6

Մագդա Մկրտչյան

Հայ երաժշտարվեստի գեղոնների՝ օրորերգության նմուշների նոր «կյանքը»

12

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը ներկայացրեց XX դարի, մեր ժամանակակից եւ երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործություններ

«Մարդու ճակատագիրը» խորագրով համերգով ամփոփվեց Հայ կոմպոզիտորական արվեստի 15-րդ փառատոնը: Ծրագրում հնչեցին Վահագն Վարդանյանի Պրելյուդ, պասակալիա և ֆուգա սիմֆոնիկ նվագախմբի համար ստեղծագործությունը, Արամ Սաթյանի «Մակբեթ» սիմֆոնիկ պոեմը և Ջոն Տեր-Թադևոսյանի 2-րդ Սիմֆոնիան՝ ըստ Միխայիլ Շոլոխովի «Մարդու ճակատագիրը» պատմվածքի: Համերգը ղեկավարում էր դիրիժոր Ալեքսանդր Հումալան: Վահագն Վարդանյանը Պրելյուդ, պասակալիա և ֆուգա ստեղծագործությունն ի սկզբանե գրել է երգեհոնի և սիմֆոնիկ նվագախմբի համար, հետագայում փոխադրել է այն նվագախմբային մեծ կազմի համար: Ըստ հեղինակի՝ ամբողջ ստեղծագործությունը երգեհոնային յուրահատուկ տրամադրության մեջ է գրված: Այն գրվել է 2017 թ., 2017-ից ի վեր հեղինակը բազմիցս անդրադարձել է, լրամշակել այն, և ահա Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի շրջանակներում առաջին անգամ ներկայացվեց ունկնդրին: Արամ Սաթյանը նշեց, որ «Մակբեթ» սիմֆոնիկ պոեմը Շեքսպիրի գործերի հիման վրա գրված իր երկրորդ ստեղծագործությունն է, առաջինը «Համլետն» է: Հեղինակը նշում է, որ այս երկու սիմֆոնիկ պոեմները գաղափարապես տարբերվում են միմյանցից: Ըստ նրա՝ «Մակբեթ» սիմֆոնիկ պոեմը ներկայացնում է մեր օրերը, հասարակությունում տիրող բարքերը, հարաբերությունները: Պարոն Սաթյանը նշում է, որ իր ստեղծագործության հիմքում լավատեսությունն, և այդ նոտայով էլ ավարտվում է սիմֆոնիկ պոեմը: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի տնօրեն Սարգիս Բալբաբյանը նշել է, որ 15 տարիների ընթացքում Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի շրջանակում հայ կոմպոզիտորների 100-ից ավելի մեծակտավ ստեղծագործություններ են թվայնացվել: Սարգիս Բալբաբյանը հույս հայտնեց, որ հնարավորություն կունենանք միջազգային հրատարակչություններին ներկայացնել հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները, որպեսզի դրանք հասանելի դառնան նաև Եվրոպայի, ԱՄՆ-ի նվագախմբերի համար, որոնք օգտվում են այդ հայտնի հրատարակչությունների հարթակներից:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը Ալեքսանդր Հումալայի ղեկավարությամբ

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը կազմակերպել են Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը և Հայաստանի կոմպոզիտորների միությունը: Այն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ: Փառատոնին աջակցում էր Հայկական բարեգործական ընդհանուր միությունը: Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի նպատակն է հանրահռչակել XX դարի և ժամանակակից հայ դասական երաժշտությունը:

Խմբագրական
Նյութը վերցված է

https://www.aravot.am/2024/04/01/1409482/ կայքից

Մեկնարկել է Ք. Պենդերեցկու անվան ժամանակակից երաժշտության փառատոնը

1

Երևանում, ապրիլի 4-ին մեկնարկել է Ք. Պենդերեցկու անվ. ժամանակակից երաժշտության չորրորդ փառատոնը: Փառատոնային երեք սիմֆոնիկ համերգների ընթացքում ներկայացվում են ինչպես Պենդերեցկու, այնպես էլ մեր օրերի ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ: Փառատոնը բացվեց Պենդերեցկու ստեղծագործությունների կատարմամբ: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ ելույթ ունեցավ տաղանդավոր ջութակահարուհի Ջու-Յոնգ Բեքը՝ կատարելով հայկական արմատներով լեգենդար լեհ կոմպոզիտորի «Մետամորֆոզներ»՝ ջութակի 2-րդ կոնցերտը, այնուհետև նվագախմբի կատարմամբ հնչեց «Կորեական» 5-րդ սիմֆոնիան: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար, գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը նշել է, որ Պենդերեցկին երաժշտության մեջ ժամանակակից նոր լեզվի, նոր մտածելակերպի ստեղծողն է: Մաեստրոն ընդգծել է, որ մեր երկրի, մեր մշակութային օրակարգի համար շատ կարևոր է ունենալ Պենդերեցկու անունը կրող փառատոն: Հայաստանը, անցկացնելով Պենդերեցկու անվ. փառատոն, արտահայտում է իր հոգևոր կապը կոմպոզիտորի հետ: Ջուքակահարուհի Ջու-Յոնգ Բեքը, որ երկրորդ անգամ է համագործակցում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ, նշել է, որ ինքը կատարել է Պենդերեցկու բազմաթիվ ստեղծագործություններ, ձայնագրել: Ընդ որում, կատարել է ոչ միայն նրա սիմֆոնիկ, այլև կամերային գործերը: Ըստ ջութակահարուհու՝ Պենդերեցկու երաժշտությունը շատ գեղեցիկ է, ազդեցիկ, հզոր, քնարական, սրտառուչ, և ունկնդիրը շատ լավ է ընկալում ու հասկանում նրա մեղեդին: *«Որպես մենակատար՝ ես մեծ հաճույք եմ ստանում նրա արվեստից: Ամեն անգամ սիրով եմ կատարում նրա ստեղծագործությունները»,* - ասում է Ջու-Յոնգ Բեքը:



Ջու-Յոնգ Բեք, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան

https://www.aravot.am/2024/04/09/1411095/

2019 թ. ստեղծված «Ժամանակակից դասականներ» կոմպոզիտորական փառատոնը 2022 թ. կրում է լեհ լեգենդար կոմպոզիտոր և դիրիժոր Քշիշտոֆ Պենդերեցկու անունը: Պենդերեցկին գրեթե 60-ամյա գործունեության ընթացքում հեղինակել է ավելի քան 100 գործիքային ստեղծագործություն, ավելի քան 120 երաժշտական գործ անիմացիոն ֆիլմերի, տիկնիկային, դրամատիկական, հեռուստատեսային թատրոնների, ինչպես նաև գեղարվեստական և վավերագրական ֆիլմերի համար:

Փառատոնի շրջանակում ապրիլի 4-18-ը կհնչեն նաև Լուդովիկո էյնաուդիի, Բեհզադ Ռանջբարանի, Ալեքսանդր Ռոզենբլատի (Պարսկաստան), Պատրիշա Մորհեդի, Սերգեյ Սլոնիմսկու և Սըր Կառլ Ջենքինսի ստեղծագործությունները:

Երեք սիմֆոնիկ համերգների ընթացքում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ հանդես կգան նաև ֆլեյտահար Ալեքսանդր Հասկինը, բաս կիթառահար Անտոն Դավիդյանցը, դաշնակահար Ջուլիա Ջիլբերքուիթը: Համերգները ղեկավարեցին դիրիժորներ Սերգեյ Սմբատյանը և Նատալի Մյուրեյ Բիլը:

Ք. Պենդերեցկու անվ. ժամանակակից երաժշտության փառատոնի շրջանակներում երևանյան ունկնդրին են ներկայացվում մեր օրերում աշխարհի տարբեր ծայրերում ստեղծագործող ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները, դրանցից շատերը Հայաստանում հնչում են առաջին անգամ:

Խմբագրական
https://hy.armradio.am/archives/562277

ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ԼՐԱՑԱՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 109-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

ԱՊՐԵԼ ԵՎ ՄԵՌՆԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ...

Ելե՛ք, հայկազյան քաջազո՛ւն սերունդներ, առե՛ք զենք ու զրահ իմ բարեսնունդ զավակներ, խփե՛ք, փշրե՛ք ձեր թշնամիների գունդը, ոգի՛ տվեք միմյանց, կանգնե՛ք թիկունք թիկունքի, թող ջախջախվի այդ նկուն գազանը:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

4

Վլադիլեն Բալյան. մտքի եւ գործի հարյուր տարվա միություն

1

Ապրիլի 25-ին լրացավ կոմպոզիտոր, երաժշտական-հասարակական գործիչ, խմբավար, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, Սուրբ Մովսես Խորենացու մեդալակիր, ՀՀ Մշակույթի նախարարության ոսկե շքանշանակիր, ՀՀ ժողովրդական արտիստ, Գյումրիի և Երևանի պատվավոր քաղաքացի Վլադիլեն Բալյանի 100-ամյակը: Վլադիլեն Բալյան անունը լսելիս իսկույն մտաբերում ես «Ամպեց, կորավ լուսնկան» շատերի կարծիքով ժողովրդական երգը: Կոմպոզիտորը, սակայն, միայն իր այս անմահ ստեղծագործությամբ չէ, որ արժանիորեն կմնա սերունդների հիշողության մեջ: Հայ և օտար բանաստեղծների տողերով բազմաթիվ երգերի, սիմֆոնիկ, կամերային, վոկալ-գործիքային, երգչախմբային, երաժշտաթատերական երկերի հեղինակ կոմպոզիտորը նաև ղեկավար, ինչպես և հիմնադիր է եղել մի շարք մշակութային հաստատությունների և նախաձեռնությունների: Վ. Բալյանի պաշտոնավարության տարիներին՝ ուր էլ որ եղել է, փայլուն մտահղացումների և անկոտրում կամքի շնորհիվ որակական մի նոր աստիճանի են բարձրացել նրա ղեկավարած հաստատությունները: Դրանց շարքում՝ Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանը, որը նա ղեկավարել է 1966-1972 թթ.՝ փաստացի դառնալով այս՝ Հայաստանի առաջին երաժշտական հուշ-թանգարանի հիմնադիր-տնօրենը: Մշակութային այս օջախը, որի հարկի ներքո Վլադիլեն Բալյանի կյանքի օրոք քանիցս մեծարել են երախտավոր հայորդուն, չէր կարող անմասն մնալ նրա մեկդարյա հոբելյանին նվիրված միջոցառումներից: Բալյան ընտանիքի նախաձեռնությամբ ծառայողին քաղաքային պանթեոնում կոմպոզիտորի հիշատակին հարգանքի տուրք մատուցելուց հետո նրա ծննդյան օրը նշանավորվեց բալյանական երգերի նոր ձայնասկավառակի շնորհանդեսով՝ Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանում: Բացման խոսքում տուն-թանգարանի տնօրեն Մարինե Օթարյանը հիշեց. *«Երբ ես Բալյանի ծննդյան 90-ամյակի կապակցությամբ դիմեցի նրան՝ հրավիրատոմսում իր կյանքի համար սկզբունքային մի արտահայտություն գրելու խնդրանքով, նա ասաց. «Ամեն ինչին պետք է մոտենալ ստեղծագործաբար»: Իսկապես, Բալյանն օժտված էր բացառիկ հատկանիշներով, որպես կոմպոզիտոր, և որպես մարդ՝ եզակի շնորհ ուներ միտքը, խոսքը գործի վերածելու: Եվ հենց այս էլ նա ավանդել է մեր թանգարանին, ինչը, կարծում եմ, մեր թանգարանի հաջողության գրավականներից է: Ես պատիվ, առիթ և բախտ եմ ունեցել լսելու նրա իմաստուն պատգամներն ու խորհուրդները, ինչի համար շնորհակալ եմ»:* Վ. Բալյանի կյանքի ուշագրավ դրվագներն ամփոփող տեսաշարին (հեղինակ՝ տուն-թանգարանի գիտաշխատող Ինեսսա Խաչատրյան) հետևեց կոմպոզիտորի որդու՝ Կարեն Բալյանի խոսքը. *«Շնորհակալություն եմ հայտնում Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանին. այն իրոք տուն է՝ բառիս բուն և ամենալավ իմաստով, և հայրիկի համար էլ ստացվեց այնպես, որ իր ստեղծած թանգարանն իր համար էլ դարձավ տուն: Սա շատ թանկ և հազվադեպ բան է, որ կյանքը, ջերմությունը, ստեղծագործությունը տարիներ շարունակ տևում է մի վայրում և չի մարում»:*

Ջայնասկավառակի նախաձեռնությունը կոմպոզիտորի թոռան՝ Տիգրան Հախումյանինն է: Ընդգրկված 2 վոկալ ցիկլերը կատարում է ՀՀ վաստակավոր արտիստ Աննա Մայիլյանը (սոպրանո):

Երեկոյի ընթացքում հնչեցին «Անցածը ետ չի դառնա» և «Դու, միայն դու» երգերի ձայնագրությունները, իսկ ևս երկու երգի բանաստեղծական տողեր էլ ներկայացրեց ասմունքող Աննա Միքայելյանը: Ի նշան Վ. Բալյանի հիշատակի առջև իր խոնարհումի՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Ս. Նավասարդյանը շոպենյան մանրանվագների մի փունջ պարգևեց ներկաներին, իսկ իր խոսքում նշեց, որ Վլադիլեն Բալյանը գտել էր կյանքն ըմբռնելու բանալին և տիրապետում էր ապրելու արվեստին:

Ա. Սպենդիարյանի տուն-թանգարան

հիշելով Սարյան ընտանիքի լավագույն բարեկամ Վ. Բալյանին՝ Ռ. Սարյանը նշեց. *«Բալյանն այնպիսի լուսավոր մարդ էր, որ իր ստեղծագործական մտահղացումներով ոգևորում էր նույնիսկ 84-ամյա Սարյանին և մղում ստեղծելու արվեստի գործեր, որպիսիք են Ալեքսանդր Սպենդիարյանի դիմանկարը և «Առնո Բաբաջանյան» համերգասրահի մոնումենտալ վիտրաժային պանոյի էսքիզը»:*

ՀՀ ժողովրդական արտիստ Թ. Պողոսյանը հուշեր պատմեց Սայաթ-Նովայի անվ. գուսանական երգի պետական վաստակավոր անսամբլի և Վ. Բալյանի համագործակցության տարիներից. *«Վլադիլեն Բալյանը, լինելով ակադեմիական դասական երաժշտության ավանդույթի կրող կոմպոզիտոր, մեծագույն գրագետ հայ էր և ուղնուծուծով տիրապետում էր ազգային երաժշտությանը, բանահյուսությանը, աշուղական արվեստին: Նրա երազած արժեքն էր, որ ժողովուրդն իր սրտում ընդունի իր երգը»:*

Ա. Տեր-Մինասյանը շնորհավորեց Բալյան ընտանիքին և բոլորին Վ. Բալյանի ծննդյան 100-ամյակի առիթով և նշեց. *«Վլադիլեն Բալյանը մեծ արժանիքների կրող համեստագույն մարդ էր: Եվ, ինչպես իր վերջին գիրքն է վերնագրել՝ «Նրանք բոլորը եղել են...», ինքն էլ ոչ միայն եղել է, այլև միշտ մեզ հետ է և կլինի՝ որպես ըստ արժանվույն ապրած մարդու մեծագույն օրինակ»:*

Վլադիլեն Բալյանի որդին՝ Կարեն Բալյանը

Գյումրիի Ռուսթավելի փողոց 5 հասցեի պուրակն անվանակոչվեց Վլադիլեն Բալյանի պատվին

Գյումրիի թիվ 1 արվեստի դպրոցի դահլիճը անվանվեց Վլադիլեն Բալյանի անունով, դահլիճի բացման պատիվը տրվեց Գյումրիի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Լուսինե Անոսյանին և Վլադիլեն Բալյանի որդուն՝ Կարեն Բալյանին

Ռ. Սարյան, Թ. Պողոսյան, Ա. Փահլևանյան, Ա. Բուդաղյան, Մ. Օթարյան, Ս. Նավասարդյան

Վ. Բալյան մարդու և գործչի մասին իրենց հուշերը պատմեցին դահլիճում ներկա մտավորականները՝ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի պրոֆեսորներ Ալինա Փահլևանյանը, Արմեն Բուդաղյանը, Թովմաս Պողոսյանը, Սվետլանա Նավասարդյանը, արվեստաբան Ռուզան Սարյանը, ճարտարապետ Անուշ Տեր-Մինասյանը:

«Բալյանը ծանր վիճակում կողմնորոշվելու և ճիշտ որոշում կայացնելու տաղանդ ուներ, և նրա գործը պետք է շարունակել»,- նշեց Ա. Բուդաղյանը: Ա. Փահլևանյանի խոսքով՝ *«Վլադիլեն Բալյանը ազգային երգ-երաժշտությունը, ֆոլկլորը շատ խորը զգացող մասնագետ էր, և զարմանալի չէ, որ նրա արվեստին տալիս են ամենամեծ գնահատականը՝ Բալյանի երգը պոկվել է հեղինակից և դարձել ժողովրդի սրտի երգը»:* Մեծագույն երախտագիտությամբ հանրապետության մյուս քաղաքներում:

ՍԻՐԱՐՓԻ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի գիտաշխատող

https://www.aravot.am/2024/04/26/1415175/?fbclid=IwZXh0bgNhZW0CMTEAAR1eXOiz_8H4MgZb2XSFhFiULaE–KLe0OY8h1Q

Երաժշտագիտության երախտավորը

Լրացավ ականավոր երաժշտագետ-տեսաբան, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, արվեստագիտության թեկնածու և Հայաստանի վաստակավոր ուսուցիչ Շուշանիկ (Սուսաննա) Բաբկենի Ամատունու ծննդյան (28.02.1924-20.04.2010) 100-ամյա հոբելյանը: Սուսաննա (այսուհետ կոնսերվատորիայում ճանաչված այդ անունով կշարունակվի հոդվածը. - ***խմբ.***) Ամատունին ծնվել է Երևանում և դեռևս մանուկ հասակում ընտանիքը տեղափոխվել է Լենինական (այժմ՝ Գյումրի): Թվում էր, թե Լենինականի երաժշտական դպրոցի ընդունակ սանի անհոգ մանկությունը ոչինչ չէր կարող խաթարել: Սակայն, 1937 թ. դառնաշունչ քամիները չխնայեցին նաև Ամատունիների համերաշխ ընտանիքը՝ հիմնավորապես խաթարելով 13-ամյա Շուշանիկի երջանիկ մանկությունը: 1937 թ. ձերբակալեցին Շուշանիկի հորը՝ հայտնի պետական գործիչ, ՀԽՍՀ կենտգործկոմի անդամ, Հայաստանի երկաթգծի փաստացի նախարար Բաբկեն Ամատունուն (1898-1938 թթ.): Դեռահաս աղջնակին վիճակված էր կրել «ժողովրդի թշնամու» զավակի ծանր խարանը: Սակայն, շնորհիվ իր բարձր կամային հատկությունների և իմաստուն մայրիկի՝ Կարսի գիմնազիայի շրջանավարտ, ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Ելիզավետա Ավետիսյան-Ամատունու հերոսական ջանքերի՝ պարմանուհին 2 եղբայրների և մանկահասակ քրոջ հետ միասին պատվով դուրս է գալիս բոլոր փորձություններից, և 1945 թ. նրան հաջողվեց գերազանցությամբ ավարտել Լենինականի Կարա-Մուրզայի անվ. երաժշտական ուսումնարանը և Լենինականի մանկավարժական ինստիտուտի երկամյա մաթեմատիկական ֆակուլտետը՝ ստանալով միանգամից 2 դիպլոմ: Ս. Ամատունու անցած դժվարագույն ուղու մասին շատ դիպուկ է արտահայտվել ամենայն հայոց բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը մի առիթով, երբ 2003 թ. հուլիսին «Երկխոսություն իմ և իմ միջև» պոեմի գիրքը նվիրել է Սուսաննա Բաբկենի Ամատունուն հետևյալ գրառմամբ. *«Հարգելի Սուսաննա Ամատունուն, այս գրքում նկարագրված դաժան փորձություններն անձամբ ճաշակած տոկուն կնոջը»:*

1945 թ. Ս. Ամատունին մեկնում է Մոսկվա և հեշտությամբ ընդունվում այն ժամանակվա ԽՍՍՀ ամենահեղինակավոր երաժշտագիտական բուհերից մեկի՝ Գնեսինների անվ. երաժշտական մանկավարժական ինստիտուտի պատմատեսական ֆակուլտետ, ուր աշակերտում է երաժշտության տեսության այնպիսի ռահվիրաների, ինչպիսիք

Շուշանիկ Բաբկենի Ամատունի

են Լ. Մազելը, Ս. Սկրեբկովը, Վ. Կոնենը (ի դեպ պաշտպանելով իր ուսուցչուհուն՝ բռնադատված, այսպես ասած «ֆորմալիզմի» ժամանակաշրջանում Վալենտինա Ժոզեֆի Կոնենին Ս. Ամատունին զրկանքներ է կրել. - մանրամասն տե՛ս՝ «Երաժշտական Հայաստան» միջազգային գիտական ամսագրի 1 (2) 2000 թ., էջ 6-7 և շարունակելի՝ 1 (3) 2001 թ., էջ 7-9 Ս. Բ. Ամատունու «Հուշեր ուսուցչուհուս մասին» հոդվածը ռուսերեն լեզվով. - ***խմբ.***) և այլք: Երևան վերադառնալուց հետո Ս. Ամատունին մի կարճ ժամանակահատված դասավանդում է Երևանի պարարվեստի ուսումնարանում, 1953-1970 թթ.՝ Երևանի Չայկովսկու անվ. մասնագիտական երաժշտական դպրոցում, իսկ 1965-ից մինչև իր կյանքի վերջին ամիսները՝ Երևանի պետական կոնսերվատորիայում՝ սկզբից որպես ավագ դասախոս և դոցենտ, իսկ 1997-ից՝ պրոֆեսոր դասավանդելով տարաբնույթ տեսական առարկաներ՝ երաժշտության պատմություն, տեսական առարկաների դասավանդման մեթոդիկա, երաժշտագիտության տեսություն և թերևս ամենաբարդ ու խրթին դասընթացներից մեկը՝ երաժշտական ստեղծագործությունների վերլուծություն՝ հատուկ նախատեսված տեսաբան-երաժշտագետների և կոմպոզիտորների համար: Պրոֆեսոր Ս. Բ. Ամատունին, լինելով իր մեծն ուսուցիչ Լ. Մազելի դպրոցի ներկայացուցիչը, հաջողությամբ համատեղում էր իր մանկավարժական գործունեությունը գիտական գործունեության հետ: Նա հեղինակ է 2 գիտական մենագրության, երաժշտական գրականության երաժշտական դպրոցների 2 դասագրքերի (6-րդ և 7-րդ դասարանների, վերահրատարակվել են 2008 թ.) և մոտ 50 գիտական հոդվածների՝ նվիրված Կոմիտասի, Ալեքսանդր Սպենդիարովի, Արամ Խաչատուրյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Անուշավան Տեր-Ղևոնդյանի, Գեղունի Չթչյանի և նամանավանդ Առնո Բաբաջանյանի գործիքային և էստրադային ստեղծագործությունների ոճաբանական առանձնահատկություններին: Առնո Բաբաջանյանի գործիքային ստեղծագործություններին նվիրված մենագրությունը, որը լույս է տեսել 1985 թ. ռուսերեն լեզվով, առ այսօր համարվում է մեծ կոմպոզիտորի գործունեությանը նվիրված միակ վերլուծական (տեսական և ոչ կենսագրական-պատմական) բնույթի գիտական աշխատությունը և ժամանակին շատ բարձր գնահատականի է արժանացել ռուսաստանցի հայտնի երաժշտագետներ՝ Վ. Ժ. Կոնենի, Գ. Գրիգորևայի, Յ. Մասլովսկայի, Ֆ. Արզամանովի, Մ. Տեր-Օգանովի, ինչպես նաև Առնո Բաբաջանյանի մերձավոր ընկերներ՝ հանիրահռչակ կոմպոզիտորներ Էդուարդ Միրզոյանի, Ալեքսանդր Հարությունյանի և այլոց կողմից: Իր երկարատև մանկավարժական գործունեության ընթացքում Ս. Ամատունին կրթել է երաժիշտ-երաժշտագետների մի քանի սերունդ՝ այդ թվում ականավոր երաժիշտներ՝ Էդուարդ Թադևոսյան, Ռուբեն Ահարոնյան, Սուրեն Հախնազարյան, երաժշտագետ-պրոֆեսորներ՝ Կարինե Ջաղացպանյան, Սվետլանա Սարգսյան, Զարուհի Տեր-Ղազարյան, Աննա Արևշատյան, Գոհար Շագոյան, Աննա Ասատրյան, կոմպոզիտորներ Երվանդ Երկանյան, Գրիգոր Դանիելյան (Դանիել Երաժիշտ) և այլն: Ամատունու երաժշտագիտական հարուստ ժառանգությունը բազմիցս վերլուծվել և բարձր գնահատականի է արժանացել Երևանի կոնսերվատորիայի արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Սվետլանա Սարգսյանի, երաժշտագետներ՝ Գոհար Շագոյանի Ռուզաննա Բեկ-Մարմարչեվայի և այլոց կողմից: Սուսաննա Ամատունուն իր բազմաթիվ աշակերտները մինչև օրս հիշում են որպես հայրենասեր, վեհանձն, բարի, համեստ, սկզբունքային և աշխատասեր անձնավորության:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

https://www.aravot.am/2024/02/28/1402759/

ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ԼՐԱՑԱՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 109-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

3

«Նարեկացի» արվեստի միությունում կայացավ «Ոգեկոչում արվեստի շնչով» ամենամյա միջոցառումը, որը նվիրված է Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակին:

Միջոցառումն աղոթքով մեկնարկեց Արարատյան Հայրապետական թեմի Սուրբ Երրորդություն եկեղեցու խորհրդակատար Տ. Վարդան քահանա Հայրապետյանը:

Միջոցառման ընթացքում հոգևոր երգերի կատարումնե - րով հանդես եկան «Գառնի» վոկալ հնգյակը (գեղար- վեստական ղեկավար՝ Սոնա Մովսեսյան) և միջազգային մրցույթների դափնեկիր «Փարոս» կամերային երգչա -խումբը (գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ Ռաֆֆի Միքայէլեան, նվագակցող՝ Լիլիթ Թալանչյան):

«Նարեկացի» արվեստի միության հիմնադիր Նարեկ Հարությունյանը նշեց, որ մեր նպատակն է մշակույթով՝ երաժիշտներով, արվեստագետներով, փոխանցել այս սուրբ օրվա պատգամը: Մենք իրավունք չունենք ուրանալ մեր սուրբ նահատակներին և դեմ գնալ Աստծուն: Մեզնից յուրաքանչյուրն ունի իր առաքելությունը և «Նարեկացի» արվեստի միության առաքելությունն է մշակույթով ծառայել բարուն և մնալ հավատարիմ ազգային դիմագծին: ՆԱՄ հիմնադիրն իր խորին շնորհակալությունը հայտնեց բոլորին, որոնք այսօր մեզ հետ են և ծառայում են լույսին՝ Քրիստոսի լույսին, որը շատ կարևոր է վառ պահել և փոխանցել:

«Նարեկացի» ժողովրդական գործիքների նվագախումբը (գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ Արտեմ Խաչատուր) հանդես եկավ Արցախի ժողովրդական երգերի կատարումներով, մենակատարներ՝ Լուսին Վանես, Աշոտ Դավթյան: Համերգը վարեց ՀՀ վաստակավոր արտիստ, դերասան Սամվել Բաղինյանը:

2003 թ. ի վեր, ամեն տարի ապրիլի 24-ին «Նարեկացի» արվեստի միությունն իր արվեստագետ բարեկամների հետ է անցկացնում հիշատակի և ոգեկոչման այդ օրը, որպես աշխարհում Հայոց Ցեղասպանության սուրբ նահատակների և նաև ասորիների, հույների նահատակված զոհերի հիշատակը հարգելու և դրա ճանաչման միջոցով այլևս թույլ չտալու նոր ցեղասպանությունների կրկնումը:

Խմբագրական
Նյութը վերցված է
https://www.facebook.com/Naregatsi կայքից

«Փարոս» կամերային երգչախումբ, խմբավար Ռաֆֆի Միքայէլեան

«Նարեկացի» ժողովրդական նվագարանների նվագախումբը ,գեղարվեստական ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ Արտեմ Խաչատուր

ԵՊԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է ԵՊԿ ՊՐՈՖԵՍՈՐ ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀՈԲԵԼՅԱՆԻ՝ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅՈՒՄ 50 ՏԱՐԻ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ԱՌԹԻՎ

Սվետլանա Կորյունի Սարգսյանը ծնվել է հունվարի 24-ին, 1945 թվականին, քանի որ հայրը զինվորական սպա էր զինվորական ծառայության մեջ գտնվելով մշտապես ըստ հրամանի տեղափոխվում էր հրահանգվող բնակավայր, ուստի ետպատերազմյան այդ տարին նշանակվել էր Թբիլիսիում (Վրաստան) որտեղ և ծնվել է ապագա տաղանդավոր, մեր այսօրվա իրականության մեջ հանրահայտ երաժշտագետը: Նա 1964-1969 թթ. ուսանել է Երևանի պետական կոնսերվատորիայի (ԵՊԿ) երաժշտության տեսության բաժնում, ղեկավարն էր՝ պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու Ռ. Ա. Աթայանը: Շարունակում է կրթությունը՝ 1971-1974 թթ. Լենինգրադի պետական կոնսերվատորիայի ասպիրանտուրայում, որտեղ նրա ղեկավարն է դառնում պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր Գեորգի Գրիգորի Տիգրանովը: Այդ թվականներին ամբողջ Անդրկովկասում (այժմ՝ Այսրկովկաս) 2 դոկտոր պրոֆեսորներ էին գործում՝ թե Ռուսաստանի առաջատար բուհերում, և թե Հայաստանում: Նրանք էին հանրահայտ ինժեներ մեխանիկ Աշոտ Մոիսեևիչը՝ ծագումով Արցախից՝ պահպանելով իր բարբառը դասավանդում էր Գյուղակադեմիայում, և սիրելի բարձրակարգ մասնագետ, ծագումով Անեցի, նաև Լենինգադում դասավանդող՝ Գեորգի Գրիգորևիչ Տիգրանովը, որի մոտ էլ մինչև իր կյանքի վերջին շրջանը՝ 90-ականները, շատերս սովորեցինք երաժշտական քննադատություն՝ միաժամանակ հռետորաբանություն և առավել ևս տարբեր սերունդների բազում երաժշտագետներ հնարավորություն ունեցան իրենց կրթությունը շարունակելու նրա աջակցությամբ և նրա դասընթացում բարձրագույն գիտական կոչումների արժանանալով: Նրանցից է Սվետլանա Կորյունի Սարգսյանը: Նա 1975 թ. արվեստագիտության թեկնածուի կոչումն ստացավ, Լենինգրադի պետական կոնսերվատորիայում պաշտպանելով թեզը՝ «Հայ երաժշտության XX դարի 60-ական թվականների զարգացման առանձնահատկությունները» թեմայով:

Ս. Կ. Սարգսյանը 1978, 1988 թթ. Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայում ստացել է Որակավորման բարձրացման դասընթացներ: Իսկ 1999 թ. արվեստագիտության դոկտորի կոչմանն է արժանացել նույն կոնսերվատորիայում պաշտպանելով՝ «Հայ երաժշտությունը XX դարի համատեքստում» թեմայով թեզը:

2000 թ. Լվովի երաժշտական ակադեմիայում (Ուկրաինա) հանդես է եկել դասախոսությամբ: 1992-1997 թթ. *"New Musical Initiatives"* որպես կազմակերպիչ է հանդիսացել ՀՀ Մշակույթի նախարարության կողմից:

Ելույթներ է ունեցել 1984, 1997, 1998 թվականներին դասախոսություններով հանդես է եկել Սանկտ-Պետերբուրգի, 1988-ին Մոսկվայի կոնսերվատորիաներում, 1986-ին՝ Վիլնյուսի երաժշտական ակադեմիայում (Լիտվա):

1974-ից դասավանդում է ԵՊԿ-ի երաժշտության տեսության ամբիոնում մասնագիտական բաժիններում տեսական դասընթացներ և 1975-ից Հայաստանի կոմպոզիտորների միության (ՀԿՄ) անդամ է:

Մասնակցել է 63 գիտաժողովի. Երևանում (1983, 1986, 1990-2006, 2013-2015 թթ.), Գյումրիում (2008, 2009, 2013-2015 թթ.), Բառանովում (Լեհաստան) (1980 թ.), Բաքվում (1983 թ.), Բռնոյում (1988 թ.), Գլազգոյում (Մեծ Բրիտանիա) (1989), Թբիլիսիում (1989, 1999), Մոսկվայում (1989, 2001, 2006, 2008, 2010, 2011, 2013, 2014, 2016 թթ.), Սանկտ-Պետերբուրգում (1987, 1990, 1994, 1997, 1998, 2002, 2012 թթ.), Մինսկում (1992 թ.), Նիժնի-Նովգորոդում (1999 թ.), Վիլնյուսում (2011 թ.): Արժանացել է բազմաթիվ կոչումների՝ 1998 թ. *International Book of Honor* կոչման *(ABI, USA),* 1996 թ.՝ Հայաստանի կոմպոզիտորների միության մրցանակի, 1994-1995 թթ.՝ Տարվա միջազգային կին կոչմանը (Միջազգային կենսագրական կենտրոն, Անգլիա), 2009-ին՝ ՀՀ Մշակույթի վաստակավոր գործչի կոչման, 2011 թ. ստացել է Հայկական Համաշխարհային Կոնգրեսի մրցանակ (Ռուսաստան), 2013-ին՝ Լեհական մշակույթի վաստակավոր գործչի կոչման (Լեհաստան), 2015 թ. գիտության ոլորտում վաստակի համար պարգևատրվել է ՀՀ Գիտության պետական կոմիտեի «Ոսկե մեդալ»-ով, 2004 թվականից Մոսկվայի Միջազգային երաժշտական միության անդամ է: 2003-ից «Երաժշտական Հայաստան» գիտական միջազգային ամսագրի, ԵՊԿ և ՀԿՄ գիտական հոդվածների ժողովածուների և 2017-ից՝ «Հայ կոմպոզիտոր» հրապարակախոսական ամսագրի, ինչպես նաև Կիևի *"Украинское музыковедение"* և Կիևի Պ. Ի. Չայկովսկու անվ. երաժշտության ազգային ակադեմիայի *"Научный вестник"* գիտական ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամ է:

ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Երաժշտագետ, «ԵՊԿ հրատարակչության» հրատարակիչ

«Եվ անչկայրյայ ի քեզ հուսամ, Հայաստա՛ն».
Վննա Մայիլյանի դասարանը ներկայանում է Հայրենիքին նվիրումներով

1

ՀՀ վաստակավոր արտիստ Աննա Մայիլյանի և իր սաների՝ օրերս կայացած համերգին կատարվեցին բացառապես հայրենասիրական երգեր՝ ճաշակով ընտրված, տրամաբանական զարգացմամբ, Հայաստանին ու հայոց ոգուն նվիրումներով՝ այնքա՜ն կարևոր այսօրվա, վաղվա, բոլոր ժամանակների համար... Հատուկ այս համերգի համար արված գործիքավորումների հեղինակներն էին՝ Երվանդ Երկանյանը, Սեդրակ Երկանյանը, Կարեն Անանյանը և Ռուբեն Ասատրյանը:

Աննա Մայիլյան, «Տաղարան» անսամբլ, ղեկավար՝ Սեդրակ Երկանյան

ԵՊԿ ուսանողներ և շրջանավարտներ

«Հայրենիքիս» խորագիրն ուներ Աննա Մայիլյանի և իր սաների համերգը: Նրանում դաշնակահար էլեն Կիրակոսյանի նվագակցությամբ հնչեցին Տ. Չուխաջյանի, Կոմիտասի, Է. Միրզոյանի, Ա. Հարությունյանի, Է. Աբրահամյանի, Է. Հովհաննիսյանի, Գ. Չթչյանի, Վ. Մանուկյանի, Կ. Պետրոսյանի, Վ. Բալյանի, Հ. Գրիգորյանի երգերը՝ բացառապես Հայրենիքի սիրուն, հայոց պատմության հերոսական էջերին, մայրենի լեզվին, հայրենի բնությանն ընծայումներ, բանաստեղծական անկեղծ, սրտամուխ տողերի, աղոթքների վրա հյուսված մեղեդիներ, որոնք, ասես, բխում էին հանդիսականների սրտերից, ասես, նոր էին գրում և առաջին անգամ հնչում, թեև շատերը հանրահայտ են, բազմիցս՝ երգված և սիրված՝ մի քանի սերունդների կողմից...

«Է՜յ, ջան-հայրենիք, ինչքա՜ն սիրուն ես,
Սարերըդ կորած երկնի մովի մեջ.
Ձրերըդ անո՛ւշ, հովերըդ անո՛ւշ,
Մենակ բալեքըդ արուն ծովի մեջ...»:

Ա. Իսահակյանի խոսքերով է. Աբրահամյանի երգը, որ հայկական լեռնաշխարհի բնության սքանչելիության պատկերի կողքին ավելի է ընդգծում հայոց ազգի տառապալից ընթացքը, առանձին հույզով է հնչում մեր օրերում, քանի որ երգի բառերը գրելուց համարյա հարյուր տարի անց դարձյալ հայի կյանքի իրական պատկերի նկարագրությունն է: Նույնը՝ Հ. Թումանյանի «Հայոց վիշտը»՝ եղանակավորած է. Հովհաննիսյանի կողմից.

«Հայոց վիշտը՝
Անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին,
Էն սև ծովում տառապելով,
Լող է տալիս իմ հոգին»:

Բայց միայն վշտի մասին չէին համերգային երեկոյին հնչած երգերը. Մ. Պեշիկթաշլյանի, Հ. Հովհաննիսյանի, Գ. Դոդոխյանի, Գ. Էմինի, Ն. Մեզպուրյանի, Ս. Ֆելեկյանի, Ա. Վշտունու, Գ. Բորյանի, Ա. Գրաշու, Հ. Հովեյանի, Ներսես Արք. Պոզապալյանի, այլոց բանաստեղծությունների հիման վրա գրված երգերը լույս ապագայի և հաղթության հանդեպ հավատի, պանդխտությունից հայրենի տուն հետվերադարձի ըղձանքի, Հայրենիքի զինյալների կորովի և քաջության մասին էին:

Համերգային երեկոյի երկրորդ բաժնում, որ անցավ Հնագույն երաժշտության «Տաղարան» անսամբլի նվագակցությամբ, Աննա Մայիլյանը դարձյալ ներկայացրեց հայրենիքին նվիրումների չխամրող փայլը. Հայաստանին և հայ զինվորյալներին ձոներ, աղոթակիր մրմունջներ՝ սկսյալ կոմիտասյան «Հայաստան» հիմներգից, Ա. Դոլուխանյանի անուշահունչ «Ծիծեռնակից» մինչև Ա. Տերտերանի «Հայրենիք» վոկալ-սիմֆոնիկ շարք և Ե. Երկանյանի «Իրիկնային ղողանջ», Վ. Սրվանձտյանի «Պճինկոն» և Կ. Անանյանի «Զինվորի երգը»:

Մեներգերով, զուգերգով, եռյակ, վեցյակ, յոթյակ կազմերով հանդես եկան Երևանի Կոմիտասի անվ. կոնսերվատորիայի ուսանողներ և շրջանավարտներ Լուիզա Երեմյանը, Անահիտ Գաբրիելյանը, Նարեկ Առուշանյանը, Մարիա Դավթյանը, Քրիստինա Գրիգորյանը, Միլենա Բեգլարյանը, Գայանե Բաղդասարյանը, Մարգարիտա Օքրոյանը, Լիանա Սիմոնյանը, Աննա Գաբրիելյանը: Իր սաների հետ և մեներգերով բեմ ելավ նաև Աննա Մայիլյանը, որի կազմած ծրագիրը խոսում է իր քաղաքացիական դիրքորոշման, նաև հայրենանվիրության ոգով իրեն վստահված և իրեն վստահող սաներին դաստիարակություն տալու մասին: Երդմնակալության պես հերթական անգամ բեմից հնչեց Կոմիտասի «Հայաստան»-ը.

«Ի վեհ անուն սիրտ իմ, ո՛հ հույժ
Ոգևորի ի նոր խրախույս,
Եվ անծկայրյաց ի քեզ հուսամ,
Ի քեզ՝ ի քեզ հույս իմ միայն,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն»:

«Ակնատես եմ հայրենիքի և մեր արվեստի հանդեպ քո նվիրվածությանը: Է. Միրզոյանը վաղուց է ինձ պատմել քո նվիրման մասին, և դու կատարում ես քո խոստումները: Մեր ազգը դարեդար շնորհակալությամբ է վերաբերվել բոլոր նրանց, ովքեր գիտեն, որ հայրենիքը երազանք չէ, այլ սերնդեսերունդ հավաքված բոլոր տաղանդների հանրագումար», - այս խոսքերով է այս համերգի առիթով Ա. Մայիլյանին դիմել Ֆրանսայում ապրող և ստեղծագործող հանրահայտ դաշնակահար և դիրիժոր Ալեքսանդր Սիրանոսյանը: *«Մշակույթը սերունդները կապող կարևոր կամուրջ է, որ պետք է պահպանել,*- սա Ա. Մայլիյանի գրավոր մտորումն է համերգից հետո: - *Հետաքրքիր է, որ բեմում գտնվելով՝ մտքով գնում էի դեպի անցյալ: Կարծես զգում էի իմ բոլոր սիրելի մարդկանց ներկայությունը, որոնք արդեն չկան կամ օտար երկրներում են: Զգացումները տարբեր էին, բայց մի զգացմունք կար, որ ինձ և իմ ուսանողներին, նաև նվագախմբին դուրս էր հանում համերգային տրամադրությունից: Դա վիրավոր Հայրենիքի հանդեպ մեծ սերն է և պայքարը, որ մեր հոգում է»:*

Չնայած համերգային ծրագրի բավական ծանրաբեռնվածությանը, հանդիսականը չձանձրացավ, չհոգնեց՝ շնորհիվ դրա՝ յուրօրինակ ներկայացում հիշեցնող կառույցի, սահուն և անընդմեջ ընթացքի: Եվ մի հանգամանք, որի մասին հատուկ կուզեի խոսել: Բացահայտորեն երևում էր բանաստեղծական խոսքի հանդեպ հարգալից, նրբանկատ վերաբերմունքը: Ոչ մի բառ, ոչ մի արտահայտություն անհասկանալի չէր. բոլոր կատարողների երգեցողությունը կգնահատեի՝ իբրև բանաստեղծությունների երգեցիկ ընթերցումներ, և սրանով էր նաև պայմանավորված հանդիսականի վրա ազդեցության մեծ ուժը: Դա Աննա Մայիլյանի ուսուցման շնորհիվ է, իր «դպրոցի» ճանաչելի կնիքը: Ունկնդրին ներկայանալ ոչ միայն ձայնի որակների ցուցադրությամբ և երգչական հմտությամբ, այլ նաև տեղ հասցնել խոսքերի հեղինակների միտքը, հույզն ու ապրումը:

Այս համերգն ինքնըստինքյան դաստիարակության մի կառուցիկ արար էր՝ ուղղված մերօրյա ունկնդրին, և հավաստում, որ անկախ բոլոր վայրիվերումներից, աշխարհաքաղաքական ցնցումներից, հանրային կյանքը կազմակերպելու կասկածելի վերածնակերպումներից, «Հայրենիք» հասկացությունն անդրժելի է, հանուն նրա անձնուրացությունը՝ հերոսություն, ոգեղենությունը նույնքան կարևոր, որքան հացը մեր հանապազօրյա...

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Գրող, լրագրող

ԱԲՈՎՅԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՊԿ-ՈՒՄ

Ծովինար Մովսիսյան

Լիլիթ Եփրեմյան, Արշալույս Գալստյան, Արևիկ Ստամբոլցյան

ԵՊԿ դասախոսներ, գիտաժողովի մասնակիցներ

Ապրիլի 16-ին Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում տեղի ունեցավ «Խաչատուր Աբովյանի գործունեության երաժշտական ուրվագիծը» խորագրով համատեղ աբովյանագիտական գիտաժողովը:

Բացման խոսքով հանդես եկավ ԵՊԿ պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանը: Ողջույնի խոսք ասացին Խ. Աբովյանի տուն-թանգարանի տնօրենի պարտականությունները կատարող Արևիկ Ստամբոլցյանը, ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Արշալույս Գալստյանը և ԵՊԿ Կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ Լիլիթ Եփրեմյանը:

Առաջին անգամ աբովյանագիտության և գրականագիտության պատմության մեջ Աբովյանի երաժշտական գործունեությունը առանձին ձևաչափով ներկայացվեց մասնագիտական տեսանկյունից, ինչը մեծագույն ձեռքբերում է հայ երաժշտագիտության և գրականագիտության համար:

Գիտաժողովի զեկուցումները կտպագրվեն առանձին գրքով:

Նշենք նաև, որ «Խաչատուր Աբովյանի գործունեության երաժշտական ուրվագիծը» գիտաժողովի շրջանակներում, Խաչատուր Աբովյանի տուն-թագարանի, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի և Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի համագործակցությամբ, ապրիլի 28-ին, Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանի տարածքում տեղի ունեցավ «Գտիր Աբովյանին» համերգային նախագիծ՝ բացօթյա համերգ-հանդիպում:

Խմբագրական

Երեք համերգ՝ պոլսահայ հանրության համար

1

Փետրվարի վերջին մեկ-երկու օրերի տարբերությամբ Ստամբուլում կայացած երեք համերգները պոլսահայ երաժշտասեր հանրությունը գնահատեց՝ որպես նշանակալից և հիշատակելի: Պոլսահայ երգիչ (բարիտոն) Արթուր Պաղտասարյանի հետ համերգային տարբեր ծրագրերով հանդես եկան Հայաստանից ժամանած դաշնակահար, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Մարգարիտ Սարգսյանը և Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի մենակատարուհի Դիանա Հարությունյանը: Արթուր Պաղտասարյանը երաժշտական բարձրագույն կրթություն է ստացել Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում՝ հայտնի երգիչ (բաս-բարիտոն) Վալերի Հարությունյանի դասարանում: Արթուր Պաղտասարյանը տարիներ առաջ մենահամերգով հանդես է եկել Երևանում, հայտնի է Ստամբուլում եկեղեցական արարողությունների ընթացքում և այլուր իր հոգևոր և աշխարհիկ երգերի կատարումներով: ԵՊԿ պրոֆեսոր, երգահան Մարգարիտ Սարգսյանի հետ իր ստեղծագործական համագործակցությունը երկար պատմություն ունի: Նրանց և Դիանա Հարությունյանի մասնակցությամբ՝ իրարից զանազան ծրագրերով բեմելը տեղում բնութագրվեցին իբրև *«մակարդակավոր և բացառիկ երևույթներ»:* Մինչև համերգային եռաշարքի մեկնարկը երաժիշտների եռյակին հյուրընկալեց Սահակ Բ. Պատրիարքը՝ հույս հայտնելով, որ *«համերգները պիտի գան մաս կազմելու քաղաքիս մշակոյթի ձեռնարկներուն, ի վայելումն մեր մշակութասեր ժողովուրդին»:*

«Հայկական երաժշտության գիշեր», «Գեղարվեստական գիշեր» և «Արևմուտքից դեպի արևելք՝ երաժշտական կամուրջ» կարգախոսներով համերգները, ինչպես արձանագրել է տեղի «Նոր Մարմարա» պարբերականը, «ծառայեցին իրենց նպատակներին»: Առաջին համերգը կայացավ փետրվարի 21-ին Ֆերիգյուղի Ս. Վարդանանց եկեղեցու «Շիրինօղլու» սրահում՝ ի նշանավորում՝ ծնունդով հալեպահայ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գրող, հրապարակախոս Հակոբ Այնթափլյանի ծննդյան 85-ամյակին:

Համերգային երեկոյի առաջին բաժնում կատարվեցին Մարգարիտ Սարգսյանի երաժշտությամբ և խոսքերն ըստ՝ Հ. Այնթափլյանի երգերը: Դրանց առաջին կատարումները մինչև այդ կայացել էին Երևանում, միայն մեկ երգն էր, որ այստեղ հնչեց առաջին անգամ. «Ես քեզի կուգամ»-ը՝ հեղինակի նվագակցությամբ Ա. Պաղտասարյանի մեկնաբանմամբ: Հայտագրի հաջորդ բաժնում ընդգրկված էին գործեր, որոնք ոչ պատահաբար առնչվում էին նույնժամ նշվող՝ մայրենի լեզվի համաշխարհային օրվա պատգամին: Եզրափակմանն իր սրտի խոսքն ասաց Ա. Պաղտասարյանը, որն այդ ձեռնարկի գլխավոր կազմակերպիչն էր:

Մեկ օր անց Պոլսո Պատրիարքական աթոռի, Հայ առաքելական և կաթողիկե համայնքների զանազան կառույցների աջակցությամբ Պեյօղլուի Ս. Երրորդություն եկեղեցու «Նարեկյան» սրահում անցավ երկրորդ համերգը: Հնչեցին Նիկոլ Գալանդերեանի ռոմանսները, որոնք մշակել և դաշնամուրային նվագակցությամբ փոխադրել է Մարգարիտ Սարգսյանը: Ըստ էության, հենց նրա մշակումների և հետևողականության շնորհիվ է Ն. Գալանդերեանի թողած հարուստ և արժեքավոր ժառանգությունը մեր օրերում նոր «կյանք» առել: Վերջին հինգ-վեց տարիներին Երևանում կայացած՝ գալանդերեանական երեկոների տրամաբանական շարունակությունն էր այս համերգը, որի երկրորդ բաժնում կատարվեցին նաև Կոմիտասի, Բարսեղ Կանաչյանի, Տիգրան Չուխաջյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Վարդ Մանուկյանի ստեղծագործությունները: «Նոր Մարմարա» թերթը հաջորդ օրն այսպես արձագանքեց. *«Տիանա Յարութիւնեան ու Արթիւր Պաղտասարեան երբեմն զուգերգերով, երբեմն ալ առանձին բեմ ելան մեկնաբանելու համար քնարական բնոյթով այդ յօրինումները, որոնք մեր ականջը շոյեցին որպէս կատարում ու երաժշտական գործ: Կասկածէ դուրս է, որ տարիներու բարեկամութիւնն ու համագործակցութիւնը անկաշկանդ երգելու և նուագելու դաշտը բացած է երեք արուեստագէտներու համար: Վստահաբար այդ է պատճառը, որ երէկ գիշեր Փրոֆ. Սարգսեանի մասնագիտական նուագակցութիւնը կը ձուլուէր երգերուն հետ և մեղեդի-կշռոյթ-ներդաշնակութիւն եռանկիւնն առատահոս երաժշտականութեամբ կը հասնէր մեր ականջներուն:*

Երգիչները բացառիկ փրոֆեսիոնալութեամբ կը մեկնաբանէին երգերը՝ գեղեցիկ ամբողջութեան մը մէջ: Տիանա Յարութիւնեան շա՜տ կը վայելէր բեմին, եւ իր հզօր ձայնը հիանալի կերպով յարմարցնելով «ռոմանսներու» շունչին՝ կը տպաւորէր մեզ: Արթիւր Պաղտասարեանը, որուն երգեցողութիւնը պարբերաբար կ՚ունկնդրենք զանազան առիթներով, այս անգամ ալ իր կատարելագործուած մեկնաբանութեամբ, երկարամեայ բարեկամներու հետ բեմը բաժնելու ուրախութիւնը կ՚ապրէր և այդ ուրախութենէն ծնունդ առած արուեստէն լիուլի բաժին կը հանէր ներկաներուն: Գալով Փրոֆ. Մարգարիտ Սարգսեանի, ան իր ուժեղ մատներով ու ամբողջ յայտագրի վրայ ունեցած վերահսկողութեամբ փաստեց իր բարձր մասնագէտի հմտութիւնն ու վարպետութիւնը:

Զգացուած էինք: Համերգը կարծես մէկ շունչով մատուցուած էր, և երգերու պատառիկները դեռ պար բռնած էին մեր սրտին մէջ: Յատկապէս «Մոռացել ես»-ի, «Վարդեր ունեմ»-ի, «Արդեօք ո՞ւր ես»-ի, «Շուշան աղջիկ»-ի, «Դու նորից եկել ես»-ի, «Հաբրբան»ի, «Անոր»-ի, «Հայաստան աշխարհ»-ի, «Այ վարդ»-ի, «Գարուն»-ի կատարումները յայտագրի գագաթնային պահերն էին»:

Համերգաշարի երրորդ՝ եզրափակիչ փուլը կայացավ Ստամբուլի Ֆիլհարմոնիկ միության հովանու ներքո: Այս անգամ հայտագրում ներառված էին արիաներ՝ համաշխարհային համբավ ունեցող կոմպոզիտորների ստեղծագործություններից, ինչպես նաև՝ նմուշներ հայ երաժշտարվեստի գանձերից:

«Շատ կարևոր համերգաշար էր, քանզի մեզ հաջողվեց մշակութային հետաքրքրություն արթնացնել պոլսահայ միջավայրում, շարժ մտցնել հայկական համայնքի հոգևոր կյանքում, - իր տպավորությունն է կիսում Մարգարիտ Սարգսյանը, - *Մեր ունկնդիրները մեծ ոգևորությամբ և երախտագիտությամբ ընդունեցին մեր ելույթները: Դրանք իրենց համար, հիրավի, մշակութային նշանակալի իրադարձություններ էին: Մեր նպատակն էր հիշեցնելու իրենց հայ լինելը, մեր մշակութային արժեքների ժառանգ լինելը, հայի ոգին արթնացնելը: Գիտակցում եմ նաև, որ շատ ավելի լուրջ խնդիր ունենք մեր սեփական երկրում հայությունը և հայեցին պահպանելու»:*

Մարգարիտ Սարգսյան, Դիանա Հարությունյան, Արթուր Պաղտասարյան, Վահագն Զաքարյան

Ստամբուլի հայկական համայնքի ներկայացուցիչներ, հոգևորականներ, համերգի մասնակիցներ

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Գրող

https://azg.am/culture/%d5%a5%d6%80%d5%a5%d6%84-%d5%b0%d5%a1%d5%b4%d5%a5%d

«Նորոգության շրջանը» հայ երաժշտական մշակույթում Աննա Արեւշատյանի ներկայայմամբ

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Սենի Արևշատյանի «Կոնստանդնուպոլսի հայ երաժիշտ-տեսաբանները. XVIII-XIX դարեր» մենագրությունը լույս է տեսել շուրջ երեք տարի առաջ՝ 2021-ին, սակայն այս երկասիրության մասին լայնորեն արձագանքեցին միայն վերջերս՝ լրատվական հրապարակումներում, սակայն, խիստ համառոտակի խոսելով երկի գոյության մասին: Սրանից երկու-երկուսուկես դար առաջ չորս կայսրությունների պատմական մայրաքաղաքում հայ երաժշտատեսական մտքի զարգացման ընթացքն է հիմնավոր կերպով ուսումնասիրել և ներկայացրել հեղինակը՝ հայ մասնագիտացված երաժշտական պատմության «Նորոգության շրջանի»՝ լայն հանրության համար «կիսափակ դռները» լայնորեն բացելով թե՛ նեղ մասնագիտական շրջանների և թե՛ արվեստասեր ընթերցողի համար:

Ի՞նչ գիտենք մեզանից մեկ - մեկուկես - երկու դար առաջ Պոլսում հայ ազգային մշակույթի ճյուղերի զարգացման, արվեստագետների և արվեստաբանների հրաշալի բույլի, մասնավորապես՝ երաժիշտ-տեսաբանների մի քանի սերունդների մասին, իրենց ժամանակին մեծ համբավ և ճանաչում վաստակած անձանց, որոնք, փաստորեն, մերօրյա հայ երաժշտատեսաբանության հիմքն են դրել: Գրիգոր Գապասաքալյանի, Համբարձում Լիմոնջյանի, Նիկողայոս Թաշճյանի, Եղիա Տնտեսյանի, Արիստակես Հիսարլյանի կյանքն ու գործը մինչ Աննա Արևշատյանի մենագրության լույսընծայումը ներկայացվել է մեր ժամանակների տեսաբանների առանձին անդրադարձներում: Սակայն վերոնշյալ գործիչների թողած ժառանգության և հայ երաժշտարվեստում ունեցած դերի ամբողջական, համահավաք պատկերն ու գնահատակը տրվել է «Կոնստանդնուպոլսի հայ երաժիշտ-տեսաբանները. XVIII-XIX դարեր» գրքում:

Ինչպե՞ս է հանգել Աննա Արևշատյանը պոլսահայ երաժշտատեսաբանների գործը ներկայացնելու գաղափարին, ինչո՞վ է գրավիչ այդ շրջանը երաժշտագետի և գիտնականի համար: Հարցիս պատասխանը գտնում եմ՝ Ա. Արևշատյանի անցած գիտական ուղուն ծանոթանալով: «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան մշակույթի հուշարձան» և «Հայ միջնադարյան «ձայնից» մեկնությունները» ատենախոսությունները հեղինակելու, «Հայ միջնադարյան հոգևոր երաժշտության հուշարձանները» թեմատիկ խումբը ղեկավարելու, «Մանրուսում» միջազգային երաժշտագիտական ժողովածուն համահիմնադիրելու և խմբագրելու, «Ջայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում», «Գրիգոր Մագիստրոսը՝ շարականագիր և գեղագետ», «Անիի երաժշտական մշակույթը» աշխատությունների և այլ մենագրությունների, մի քանի հարյուր հոդվածների, զեկույցների վրա աշխատելու ընթացքում անդրադարձել է նաև «Նորոգության շրջանի» երաժիշտ - տեսաբաններին: 2013-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել Աննա Արևշատյանի «Գրիգոր Գապասաքալյանի երաժշտագիտական ժառանգությունը» մենագրությունը: Խմբագիրը հայրն էր՝ ակադեմիկոս, Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի երկարամյա տնօրեն Սեն Արևշատյանը: Գիտական երկը նվիրված է XVIII-XIX դարերում Կոստանդնուպոլսում գործած հայ առաջին երաժշտագետին, որի թողած գիտական ժառանգությունն ամփոփում է հայ միջնադարյան երաժշտական տեսական և գեղագիտական մտքի հարուստ փորձն ու ավանդույթները: Սա սկիզբն էր այս ուղղությամբ հետագա ուսումնասիրությունների. շուտով գրաբարից ռուսերեն է թարգմանում Գր. դպիր Գապասաքալյանի «Գիրք երաժշտական»-ը՝ ծավալուն ներածականով և մանրամասն ծանոթագրություններով: Պատահական չէր նման ուշադրությունն այս աշխատության հանդեպ. այն համեմատական երաժշտագիտության տեսանկյունից դիտվում է՝ որպես Պոլսում դարեր շարունակ համագոյակցող մշակույթների փոխհարաբերություններին վերաբերող արժեքավոր աղբյուր: Եվ ահա այս աշխատասիրությունների վերջնարդյունքը դարձավ «Կոստանդնուպոլսի հայ երաժիշտ-տեսաբանները» գիրքը. ստեղծվել է առանձին ընդհանրացնող մի ուսումնասիրություն՝ մեկտեղված անդրադառնալով Պոլսում ստեղծագործած երաժիշտների վաստակին և ներդրմանը ոչ միայն ազգային, այլ նաև Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության երաժշտա-մշակութային տարբեր բնագավառներում, և սա արվել է՝ ելնելով արդի երաժշտագիտության չափանիշներից և պահանջներից ելնելով:

Որպեսզի այս հոդվածի սահմաններում պատկերացում տանք բոլոր այն դեմքերի մասին, ում անունն ու գործը հոլովվում է մենագրությունում, յուրաքանչյուրի մասին խոսենք առանձին-առանձին: *«Նոր ժամանակի ազգային երաժշտական գիտական մտքի ակունքներում կանգնած Գրիգոր Գապասաքալյանի, հայկական նոր նոտագրության հեղինակ Համբարձում Լիմոնջյանի, Հայ առաքելական եկեղեցու երաժշտածիսական մատյանների երգասացությունների ձայնագրությունն իրականացնող Նիկողայոս Թաշճյանի և ազգային երաժիշտների կենսագրություններն ի մի բերած Արիստակես քահանա Հիսարլյանի ստեղծագործական գործունեությունն այսօր էլ կարիք ունի ուսումնասիրության և գնահատման»,* - գրքի առաջաբանում գրում է Ա. Արևշատյանը: Գրքից իմանում ենք, որ լինելով միջնադարյան երգարվեստի ավանդույթների վերջին կրողը՝ Գապասաքալյանը խորապես գիտակցել է ազգային մասնագիտացված երաժշտարվեստին սպառնացող վտանգները: Առաջնորդվելով անցյալի ժառանգության՝ տեսական և գործնական փորձի պահպանման և փոխանցման կարևորության խորհրդով՝ դա ձգտել է վավերացնել և իմաստավորել իր աշխատություններում: Նա առաջարկել է երաժշտական նշանագրության իր ստեղծած համակարգը, որը թեև չի արմատավորվել, բայց խթան է հանդիսացել Համբարձում Լիմոնջյանի հայկական նոր նոտագրության ստեղծման համար: Երաժշտագետի ժառանգության գնահատականը միանշանակ չի եղել. Ա. Արևշատյանի կարծիքով, նրա ժառանգության ոչ արդարացի գնահատականը պայմանավորված է եղել աստվածաբանական տարրի զգալի ներկայությամբ, որ որոշ տեսաբանների կողմից ընկալվել է՝ որպես հետադիմական: Այն, XVIII դ. եվրոպական գեղագիտության միտումների համեմատ, դիտվել է իբրև չոր սխոլաստիկա: Պատճառներից մեկն էլ հեղինակի լեզուն է՝ դժվար ընկալելի պաճուճազարդ գրաբարը: Հիմնավոր աստվածաբանական և փիլիսոփայական կրթության, մեծ գիտապաշարի տեր՝ Գապասաքալյանը եղել է միջնադարյան խազագրությունը նորոգելու նախաձեռնողներից մեկը: Դա նախաձեռնում էր՝ հասկանալով, որ օսմանյան դարավոր տիրապետության ներքո և իսլամական շրջապատում գոյատևող քրիստոնյա ազգերի համար գնալով դժվարանում էր անաղարտ պահել սեփական ազգային մշակութային ժառանգությունը: Նա լուսաբանել է հոգևոր երգարվեստի բաժինները՝ սկսած երաժշտության ծագումից, դասակարգումից մինչև խազաբանություն: Ա. Արևշատյանը մանրակրկիտ ուսումնասիրությամբ եզրահանգում է, որ Գապասաքալյանի կիրառած նոտագրությունը հայկական խազերով և բյուզանդական նևմաներով իրագործվող զուգահեռ նշանագրություն է՝ նոր նշանների ներմուծմամբ: Նրա «անձայն խազ» անվանյալ նշանը մինչ հիմա անհայտ նշանակությամբ է: Անդրադառնալով երաժշտագետի բոլոր աշխատասիրություններին՝ Ա. Արևշատյանը տալիս է նաև հայազգի և օտարազգի այլ երաժիշտների և տեսաբանների անուններ՝ նրանց գործը քննելով Գապասաքալյանի տեսական ժառանգության համատեքստում: Ա. Արևշատյանը ենթադրում է, որ գուցե մոլդավացի իշխան, թուրքական դասական երաժշտության տեսությանը նվիրված աշխատությունների հեղինակ և արաբական այբուբենի տառերի հիման վրա նոր նոտագրության հիմունքներ ստեղծած նշանավոր գիտնական Դիմիտրիե Կանտեմիրի օրինակն ու փորձն են հենց հայ երաժշտագետին հուշել նմանատիպ մի նախաձեռնության գաղափարը: Ա. Արևշատյանի գնահատմամբ, Գապասաքալյանի աշխատությունները միջնադարյան երաժշտական գիտական և գործնական տեսության հանրագիտարան են:

1813-1815 թթ. Համբարձում Բաբա Լիմոնջյանը ստեղծել է նոր հայկական նոտագրությունը, որն ընդհուպ մինչև Կոմիտասի հավաքչական աշխատանքը լայն տարածում է ստացել ազգային երաժշտական շրջանակներում: Այն լայնորեն կիրառվել է ոչ միայն հոգևոր, այլ նաև ժողովրդական և քաղաքային երգարվեստի նմուշները ձայնագրելու համար: Հ. Լիմոնջյանն ու իր աշակերտներն են արել շարականների առաջին ձայնագրությունները, այնուհետև՝ Եղիա Տնտեսյանի «Շարակնոցի» ձայնագրությունը: Մենագրության հեղինակը կարևոր քայլ է համարում նոր հայկական ձայնագրությունը՝ նկատի առնելով, որ ուշ միջնադարում հոգևոր երաժշտությունը և խազարվեստը հետզհետե անկում էին ապրում: Առանձնալի ուշագրավ են Լիմոնջյանի կյանքին ու շնորհներին նվիրված պատումները, որոնք վերաշարադրել է Ա. Արևշատյանն իր գրքի էջերում: Բացարձակ լսողությամբ և հազվագյուտ հիշողությամբ օժտված երաժիշտը մրցակցել է ժամանակի հռչակավոր երաժիշտների՝ Իսհաք Հրեի և Դեդե Իսմայիլի հետ՝ իրենց կատարումներին հընթացս նոտագրելով և անմիջապես հիշողությամբ կատարելով նրանց ստեղծագործությունները: Դրանք առասպելների են նման, բայց հավաստի են և արժանի են մեր օրերում նոր լույսի ներքո գեղագրորեն լուսաբանելուն: Լիմոնջյանի գործի շարունակողներն էին Արիստակես Հովհաննիսյանը, որ լրացրել և ավարտին է հասցրել իր ուսուցչի նորագյուտ նոտագրության համակարգը, Գաբրիել Երանյանը, որի հեղինակած «Հայաստան», «Կիլիկիա», «Արիք, Հայկազունք», «Հայ ապրինք, եղբայրք» երգերը մինչ օրս հնչում են մեր բեմերում: Համբարձումյան նոտագրությունը Պոլսի երևելի մշակութային գործիչներից մեկը՝ Արիստակես քահանա Հիսարլյանն անվանել է «հրաշալի գյուտ»: «Պատմութիւն հայ ձայնագրութեան և կենսագրութիւնք երաժիշտ ազգայնոց» աշխատությունում Ա. Հիսարլյանն արժեքավոր տեղեկություններ է թողել պոլսահայ երաժիշտների մասին: Ընդգծենք, որ նա, Պոլսի XIX դարի եկեղեցական կյանքը գնահատելիս՝ գրել է. *«ԺԹ. դարու սկիզբները եկեղեցական դպրութիւնը այնքան բարգաւաճեալ վիճակ էր, որ իրաւամբ կրնան անուանել Դպրութեան Ոսկեդարը»:* Միաժամանակ եկեղեցական երգեցողության ոճը թելադրողների ճաշակը քննադատելով՝ զուսպ հանդիմանությամբ իր մտահոգությունն է արտահայտել «շարականաց հոգեզմայլ խաղալիք դարձրած» հոգևորականների վերաբերմունքի առնչությամբ, որ քմահաճորեն և անպատշաճ են երգում, առանց նկատի առնելու, որ եկեղեցական երաժշտությունը, ոնց Հիսարլանն է բնորոշում, «իր պարզությամբ վսեմ է և գեղեցիկ»:



Նույն շրջանում կոմպոզիտոր, երաժշտագետ, մանկավարժ, 1879-ից՝ Էջմիածնի Մայր եկեղեցու դպրապետ Նիկողայոս Թաշճյանը ձայնագրել է եկեղեցական երաժշտածիսական մատյանները: Լիմոնջյանի հայկական նոր նոտագրությամբ շարականների ձայնագրումը և լույսընծայումը աննախադեպ էր և խիստ արժեքավոր: Երաժշտածիսական, երգչական ժողովածուները, մասնավորապես, Շարակնոցը հայ մշակութային գանձարաններ են և առ այսօր ունեն գիտական և գեղարվեստական արժեք:

Ողբերգական էր Եղիա Տնտեսյանի ճակատագիրը: Երաժիշտ-տեսաբան, մանկավարժ, տպագրիչ Տնտեսյանը Պոլսից Հաճն, ապա՝ Երուսաղեմ, Էջմիածին իր անցումներով տեղերում ուսումնասիրել է երգվող շարականները, խազագիր ձեռագրերը, մասնագիտացել հայկական և եվրոպական նոտատպության ասպարեզում, հիմնել տպարան, հրատարակել Հակոբ Պարոնյանի ստեղծագործությունները: Նա նվիրվել է ազգային հոգևոր երգարվեստը վերածայնագրելու, կարգավորելու գործին՝ միջնադարյան մեր հոգևոր հարստությունը հետագա աղավաղումներից զերծ պահելու համար: Մշտապես զբաղվել է խազերի վերծանության խնդրով՝ խազերի ուսումնասիրությունը դնելով լուրջ հիմքի վրա և այդ գործին տալով հետազոտական բնույթ:

1869-1871 թթ. Տնտեսյանի գրառած Շարակնոցը լույս տեսավ շուրջ հիսուն տարի անց՝ 1933 թ.-ին՝ իր որդու՝ Լևոնի ջանքերով: 1880-ին «Նոր երգարան հայոց» ժողովածուում հրատարակելով Մ. Նալբանդյանի «Ազատություն» և ազատախոհական այլ բանաստեղծություններ, այդ թվում՝ ֆրանսիական «Մարսելյեզը»՝ նա դարձել է աբդուլհամիդյան բռնության առաջին զոհերից մեկը: Եղիա Տնտեսյանը բանտարկվել և մահացել է բանտում:

Ա. Արևշատյանի մենագրության վերջին՝ վեցերորդ գլուխը նվիրված է Կոմիտասի գնահատականներին, որ տվել է պոլսահայ եկեղեցական երաժշտական կյանքին: Թեմայի «կոմիտասական» նման ամփոփումը հավելում, զորացնում է այս աշխատասիրության քննական շեշտադրումները:

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Գրող
Լրագրող

Մեկնարկել է «Հայ կոմպոզիտորական արվեստի» 15-րդ փառատոնը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը Հայաստանի կոմպոզիտորների միության հետ անցկացնում է «Հայ կոմպոզիտորական արվեստի» 15-րդ փառատոնը:

Փառատոնի շրջանակում, մարտի 14-28-ը ներկայացվեցին XX դարի մեծանուն և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Մարտի 14-ին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ ելույթ ունեցավ իտալացի թավջութակահար, հեղինակավոր մրցույթների դափնեկիր, այդ թվում՝ Ա. Խաչատրյանի անվ. միջազգային մրցույթի 1-ին մրցանակակիր՝ էտտորե Պագանոն: Անվանի թավջութակահարը ներկայացրել է Առնո Բաբաջանյանի Թավջութակի կոնցերտը: Համերգի ընթացքում հնչել են նաև Էդգար Հովհաննիսյանի Պասակալիան «Անտունի» բալետից, որը կոմպոզիտորը նվիրել է Կոմիտասի ծննդյան 100-ամյակին, Վաչե Շարաֆյանի Սյուիտը «Երկրորդ Լուսինը» բալետից՝ 10 մասից: Համերգը ղեկավարել է դիրիժոր Ռուբեն Ղազարյանը:

Մարտի 19-ին կայացած համերգին ելույթ ունեցավ շեփորահար Սելինա Օստը: Նա ունկնդրին ներկայացրեց Ալեքսանդր Հարությունյանի շեփորի Կոնցերտը, որը շեփորի համար գրված աշխարհում ամենահայտնի ստեղծագործություններից է: Կատարվեցին նաև Ալեքսանդր Հարությունյանի Տոնական նախերգանքը սիմֆոնիկ նվագախմբի համար և Ավետ Տերտերյանի 3-րդ Սիմֆոնիան: Համերգը ղեկավարեց Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը:

Փառատոնն ամփոփվեց մարտի 28-ին, «Մարդու ճակատագիրը» խորագրով համերգով. Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը ներկայացրեց Վահագն Վարդանյանի Պրելյուդ, պասակալիա և ֆուգա»-ն սիմֆոնիկ նվագախմբի համար, Արամ Սաթյանի «Մակբեթ» սիմֆոնիկ պոեմը, Ջոն Տեր-Թադևոսյանի 2-րդ Սիմֆոնիան՝ «Մարդու ճակատագիրը» (ըստ Միխայիլ Շոլոխովի նույնանուն պատմվածքի), դիրիժոր Ալեքսանդր Հումալանի ղեկավարությամբ:

Էտտորե Պագանո.Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, դիրիժոր Ռուբեն Ղազարյանի ղեկավարությամբ

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը հայաստանյան մշակութային կյանքի նշանակալի իրադարձություններից է. այն անշեղորեն հետևում է XX դարի և ժամանակակից հայ դասական երաժշտության հանրահռչակման իր առաքելությանը:

Փառատոնի կարևորագույն բաղադրիչներից են հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունների ձայնագրումը, տեսագրումը, պարտիտուրների և նվագաբաժինների թվայնացումն ու պահպանումը: Փառատոնի գոյության ընթացքում թվայնացվել են ավելի քան 90 հայ կոմպոզիտորների շուրջ 100 մեծակտավ ստեղծագործություններ, ձայնագրվել են շուրջ 300 երաժշտական երկեր, իրականացվել են մեծ թվով պրեմիերաներ:

Նյութը վերցված է https://escs.am/am/news/21226 կայքից

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Միջազգային կապեր

1

✔ Փետրվարի 23-ին Հայաստանի Հանրապետությունում Արաբական Միացյալ Էմիրությունների Դեսպան դոկտոր Նարիման Ալմուլլան այցելեց Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիա:

Հրավերը համակարգում էր ԵՊԿ ռեկտորի խորհրդական Գևորգ Մնացականյանը: Պաշտոնական հանդիպմանը ներկա էին նաև ԵՊԿ Գիտական գծով պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանը և Ուսումնական գծով պրոռեկտոր և Միջազգային հարաբերությունների, հանրային կապերի գծով պրոռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Արամ Հովհաննիսյանը: Զրուցակիցները կարևորեցին երկու երկրների մշակութային հարաբերությունների զարգացման հնարավորությունները, կրթական նոր համագործակցության հեռանկարները, անդրադարձան շարունակական կրթության կարճաժամկետ նախագծեր կազմակերպելուն:

Ներկայացվեցին Հասմիկ Պապյանի ղեկավարությամբ գործող Օպերային ստուդիայի ներկայիս հաջողությունները, Դուբայի օպերայի թատրոնի հետ հնարավոր փոխգործակցության մի շարք հարցեր:

Հանդիպման երկրորդ հատվածում համերգային կատարումներով հանդես եկան կոնսերվատորիայի ուսանողները հետևյալ ծրագրով՝ Ֆրեդերիկ Շոպեն՝ 3-րդ Սկերցո, կատարեց՝ Մերի Շարբաթյանը, դաշնամուր, 2-րդ կուրս, ղեկավար՝ պրոֆեսոր Սերգեյ Սարաջյան,

Էդուարդ Աբրահամյան՝ 19-րդ Պրելյուդը, ***gis-moll***, կատարեց՝ Թերեզա Մարկոսյանը, դաշնամուր, 3-րդ կուրս, ղեկավար՝ պրոֆեսոր Սերգեյ Քեչեկ,

Գրիգոր Նարեկացի՝ «Սայլն այն իջաներ», կատ.՝ Էրիկ Ալոյանը, ժողովրդական երգեցողություն, ղեկավար՝ պրոֆեսոր Արզաս Ոսկանյան,

Eugene Freisen - Shadow play, մենանվագ թավջութակի համար, կատարեց՝ Մարիա Արիստակեսյանը, թավջութակ, 1-ին կուրս, ղեկավար՝ Արմեն Մեսրոպյան:

Օրակարգը եզրափակվեց Ղ. Սարյանի անվ. Օպերային ստուդիայի համերգասրահում, ԵՊԿ Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի նվագախմբի հետ հանդիպմամբ: Ժողովրդական գործիքների նվագախումբը հանդես եկավ Սամվել Երկնափեշյանի ղեկավարությամբ, կատարելով հայկական ազգային պարերի շարան:

Ռեկտոր Սոնա Հովհաննիսյանը ՀՀ-ում Արտակարգ և լիազոր Դեսպան դոկտոր Նարիման Ալմուլլանին նվիրեց կոնսերվատորիայի ուսանողների կատարումներից բաղկացած երկու ձայնասկավառակ և Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» հայոց մշակութային կոթողը:

✔ Մարտի 7-ին պաշտոնական այցով կոնսերվատորիայում էր Հարավային Կորեայի կրթության միջազգային ինստիտուտի (IMEI) խորհրդի նախագահ, *«Sesory»* երաժշտական մասնագիտական դպրոցի ներկայացուցիչ, մանկավարժական գիտությունների պատվավոր դոկտոր՝ Զո Գյու Յունի գլխավորած պատվիրակությունը:

Հարավային Կորեայի կրթության միջազգային ինստիտուտի (IMEI) խորհրդի նախագահ, «Sesory» երաժշտական մասնագիտական դպրոցի ներկայացուցիչ, մանկավարժական գիտությունների պատվավոր դոկտոր՝ Զո Գյու Յունի գլխավորած պատվիրակությունը ԵՊԿ-ում

Հյուրը ներկայացրեց Հարավային Կորեայի վերջին 70 տարվա պատմությունը: Ավերակների ու որբերի երկիրն այսօր դարձել է ծաղկող դրախտավայր, չունենալով ոչ մի բնական ռեսուրս, հենվելով մարդկային կամքի և լավատեսության վրա, առաջնորդվելով ժողովրդի վերածննդի, միասնության, հոգատարության, անձնազոհության գաղափարների վրա՝ Սեքվոյա ծառի նման արմատներով միավորվելով հոգատարության և երազանքի շուրջ:

Դոկտոր Զո Գյու Յունը նշեց, որ երիտասարդները կամավորական աշխատանքի ծրագրերով մեկնելով այլ երկրներ և վերադառնալով, միանգամայն փոխվում են: Նրանց համար հստակ է դառնում, որ երջանկությունը՝ ուրիշի համար ապրելն է: Անգամ այսօրվա դեմոգրաֆիկ խնդիրները նվիրման պակասից են: *«Այն, ինչ մտածում ենք մեր սահմաններում՝ երջանկություն չի: Երջանկությունը մեր անձի սահմաններից դուրս է հնարավոր»:*

Դոկտոր Զո Գյու Յունը խոսեց ևս մեկ սկզբունքի՝ սեփական երկրի տիրոջ հոգեբանությամբ ապրելու կարևորության մասին: *«Նախորդ սերունդը դժվարին պայմաններում էր, բայց նրանք ապրում էին ժպիտը դեմքներին, հավատալով իրենց ուժերին: Պետք է սկսել մեկ մարդուց, որը հետո կդառնա 2, 4, 8 և այլն: «Անհնար է» բառից հարկավոր է մեկընդմիշտ հանել ժխտական նախածանցը և կտեսնենք, թե որքան հնարավոր անելիք կա: Ամեն երիտասարդ պետք է հավատա, որ ինքը աշխարհում լավագույն երաժիշտը կարող է դառնալ, ով իր կատարումով կջերմացնի մարդկանց սրտերը: Երբ թվում է, որ այլևս ուժ չի մնացել, միշտ պետք է կրկնել, որ մենք կարող ենք: Պետք է խոսել դրա մասին»,* - եզրափակեց հյուրը և հրավիրեց մասնակցել Հարավային Կորեայի Կրթության առաջնորդների ֆորումին, որը կկայանա այս տարվա հուլիս ամսին:

Ռեկտորը շնորհակալություն հայտնեց այցելության համար, ընդգծելով, որ մեր երկիրը շարունակում է աշխատել ու ամրանալ: Վստահ ենք, որ մեր համագործակցությունը արդյունավետ կլինի:

✔ Erasmus+ դասախոսների և ուսանողների շարժունակության ծրագրի շրջանակներում Զագրեբի (Խորվաթիա) համալսարան են մեկնել Ղ. Սարյանի անվ. Օպերային ստուդիայի գեղարվեստական ղեկավար, ՀՀ ժողովրդական արտիստ Հասմիկ Պապյանը և նույն ստուդիան ներկայացնող մեներգիչ Արամո Մամիկոնյանը: Վարպետության դասերի կոնցերտմայստերն է Զագրեբի երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր, երաժշտագետ Էվա Կիրխմայեր Բիլիչը: Հայ-խորվաթական ներկա մշակութային կապերում առանձնահատուկ կարևոր է նրա գործունեությունը, ում շնորհիվ օտարազգի ուսանողները կատարում են նաև հայ հեղինակներին:

Հասմիկ Պապյանի վարպետության դասերի երկրորդ օրը ներկայացվեց հայ երաժշտություն, ինչպես օրինակ՝ «Ասում են՝ ուռին» Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայից, Լուչանո Բերիոյի «Ժողովրդական երգեր» ցիկլում ընդգրկված «Լուսինն ելավ» և այլն: Պատանի երգիչները մեծ հետաքրքրություն ունեն երգել հայկական ռոմանսներ:

Հասմիկ Պապյանի վարպետության դասը Զագրեբի համալսարանում

Համերգային առաջին օրը Արամո Մամիկոնյանը և Արուսյակ Ռշտունին ներկայացրեցին հայ կոմպոզիտորական արվեստը, հատկապես տպավորիչ էր Կոմիտասի «Անտունին»: Այդ երեկոյից հետո այսօր Զագրեբի ունկնդիրը հատուկ է սպասելու Ֆրանց Շուբերտի «Ձմեռային ճանապարհը» ցիկլի կատարմանը:

ԵՊԿ միջազգային համագործակցության համերգային հետգրություն

✔ Զագրեբի *«PASIONSKA BAŠTINA 2024»* 33-րդ փառատոնի մարտի 12-ին «*CELESTE»*

9

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

«CELESTE» վոկալ անսամբլ, ղեկավար՝Յաշենկա Օստոյիչ

8

վոկալ անսամբլը ներկայացրեց «Լռության երաժշտություն» խորագրով ծրագիրը: Յ. Ս. Բախի, Ա. Բրուքների, Ջ. Տավենների խմբերգերի հետ միասին հնչել է նաև խորվաթական և հայ հոգևոր երաժշտություն: Անսամբլի հիմնադիր, գեղարվեստական ղեկավարն է Զագրեբի համալսարանի Երաժշտական Ակադեմիայի Արվեստի, մշակույթի և միջհամալսարանական դեպարտամենտի գծով պրոռեկտոր Յաշենկա Օստոյիչը:

Երգչախմբային ակտիվ գործունեություն ծավալող խմբավարը հիմնել է խորվաթական *Collegium Pro Arte* ընկերությունը: Այն ներառում է ճանաչված և մրցանակակիր *Cappella Zinka* և *Cappella Odak* երգչախմբերը:

Հիշեցնենք, որ փառատոնի մեկնարկը նույնպես նվիրված էր հայ երաժշտությանը, այդ օրվա դասախոսությունից ու հայ երաժիշտների մասնակցությամբ համերգից հետո Յաշենկա Օստոյիչը ցանկություն է հայտնել առաջին անգամ ներկայանալ հայ կոմպոզիտորի ստեղծագործությամբ: Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիան խմբավարին անմիջապես տրամադրեց Կոմիտասի «Տեր ողորմեա»-ն: Զագրեբում էր ԵՊԿ դասախոս Լիլիթ Մարտիրոսյանը, ում տեքստային ու երաժշտական կատարողական հարցերին վերաբերող հուշումներն ու առկա համագործակցությունը հնարավոր դարձրեցին իրականացնել խորվաթ երաժիշտների մտահղացումը:

Երաժշտական անցուդարձը ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում

✔ Մարտի 1-ին, ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում տեղի ունեցավ հանդիպում հայ անվանի ջութակահար, դիրիժոր, երաժշտագետ, հասարակական գործիչ Դանիել Երաժշտի հետ: Նա հանդես եկավ դասախոսությամբ, որը կրում էր «Կոմիտասը և հայոց ազգային ինքնությունը»՝ խորագիրը: Բանախոսն անդրադարձավ հայ ազգային երաժշտության այն հիմնախնդիրներին, որոնք արդիական են եղել թե՛ Կոմիտասի ապրած ժամանակաշրջանում և թե՛ մերօրյա մշակութային կյանքում: Սկսելով ազգային կուռ արժեհամակարգի բնորոշիչներից, Դանիել Երաժիշտը դրանց մեջ կարևորեց ազգային երաժշտության էությունն ու ոգին զգալու, անաղարտ պահելու բացառիկ միջոցները: Դրանցից առավել նշանակալին համարվեց անմնացորդ սերը հայ տոհմիկ երաժշտության հանդեպ: Հնչեցին Կոմիտասի «Հայրիկ, Հայրիկ» երգի տարբերակները:



Դանիել Երաժիշտ

Հանդիպումն անցավ շատ ջերմ և հուզումնալից մթնոլորտում՝ լի անվանի երաժշտի գործունեության լենինականյան շրջանին վերաբերող թանկ հուշերով:

Բուհի անսամբլն իր խորին երախտագիտությունն է հայտնում Նարեկացի արվեստի միությանը, այս հիշարժան հանդիպմանն աջակցելու և բուհի հետ ստեղծագործական համագործակցության համար:

✔ Մարտի 11-ին ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում տեղի ունեցավ հանդիպում անվանի քանոնահարուհի, ԵՊԿ պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ Ծովինար Հովհաննիսյանի հետ: Շատ սպասված ու բաղձալի հանդիպումն սկսվեց ողջույն-կատարումով. ելույթ ունեցան ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի շրջանավարտ Ասյա Հովհաննիսյանը, Գյումրիի Շերամի անվ. 5-րդ երաժշտական դպրոցի աշակերտներ՝ Բուրաստան Գրիգորյանը և Արաքսյա Մանուկյանը (դասատու՝ ՀՀ վաստակավոր մանկավարժ Լաուրա Մելիքյան): Ծ.Հովհաննիսյանը հանդես եկավ դասախոսությամբ՝ նվիրված հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի արդի հիմնախնդիրներին, քանոն նվագարանի, տեխնիկական հիմնարար արտահայտչական հնարավորությունների վերազինմանը, նվագարանագործ վարպետներին, ինչպես նաև վերջին շրջանում այս նվագարանի հանդեպ միջազգային ասպարեզում աճող հետաքրքրությանը: Իբրև փայլուն օրինակներ, անվանի քանոնահարուհին կատարեց հայ միջնադարյան երաժշտության, ինչպես նաև սեփական ստեղծագործությունների անզուգական նմուշներ: Հնչեցին բազմաթիվ հարցեր, որոնք միտված էին հայ ազգային երաժշտության, հայ ինքնության պահպանման և քանոնի կատարողական արվեստի զարգացման հեռանկարներին:

Ծովինար Հովհաննիսյան

✔ ժան Բատիստ Լյուլլիի հանդիսավոր քայլերգով ավարտվեց Բարոկկո երաժշտության համերգը, որը տեղի ունեցավ մարտի 2-ին, Գյումրիի կամերային երաժշտության դահլիճում: ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախմբի (Արմեն Կարճյանի ղեկավարությամբ) հետ հանդես եկան մենակատարներ՝ Լիլի Սևոյանը, Ջուլիետա Հարությունյանը, Նարեկ Ավագյանը, Լուսինե Մլքե-Գալստյանը, Տիգրան Բերկելյանը, Տիգրան Պետրոսյանը: Շատ գեղեցիկ համագործակցության արդյունքում հնչեցին՝ Յ. Ս. Բախի Բրանդենբուրգյան 6-րդ Կոնցերտի, Յ. Ս. Բախի երկու ֆլեյտաների, կլավիրի և նվագախմբի 6-րդ Կոնցերտի, Գ. Ֆ. Հենդելի 1-ին Կոնցերտը երգեհոնի և նվագախմբի համար, Գ. Ֆ. Հենդելի Op. 6, N 12 *Concerto Grosso*-ի անչափ տպավորիչ կատարումներ:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի 3-րդ կուրսի ուսանողուհի **Լյուդմիլա Հովսեփյանին** (ուսումնական ասիստենտներ՝ Հռիփսիմե Պետրոսյան և Ազատ Հարությունյան, դոցենտ՝ Անահիտ Մանվելյան) Հունգարիայում կայացած միջազգային մրցույթում 1-ին մրցանակի արժանանալու առթիվ: Բարեմաղթում ենք նորանոր հաջողություններ:

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի 4-րդ կուրսի ուսանողուհի **Անահիդա Զաքարյանին** (պրոֆեսոր Արմեն Հարությունյան) Apple Hill (Նելսոն, ԱՄՆ) Կամերային երաժշտության կենտրոնում անցկացվող մրցույթ-փառատոնի ընտրական փուլում հաղթելու և այդ հեղինակավոր փառատոնում Հայաստանը ներկայացնելու առթիվ:

Պատրաստեց՝ **ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ**

Նյութը քաղված է https://www.facebook.com/YerevanStateConsevatory էջից

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի կամերային նվագախումբ, դիրիժոր՝ Արմեն Կարճյան

Եվրոպայի ամենաստեղծարար եւ փնտրված դաշնակահարուհիներից մեկը՝ Մարիաննա Շիրինյանը Պրահայում. Գրիգին հազորդեց Բաբազանյանը

1

Մարտի 11-ին Պրահայի ֆիլհարմոնիայի՝ Ռուդոլֆինումի պատմական դահլիճում հնչեց Առնո Բաբաջանյանի «Էլեգիան»՝ դանիաբնակ հանրահայտ դաշնակահար Մարիաննա Շիրինյանի հոգեպարար կատարմամբ: Տաղանդավոր հայ դաշնակահարուհին այդպիսով իր հայկական ողջույնը հղեց դահլիճին, որը չդադարող ծափերով ընդունել էր նրա փառահեղ ելույթը՝ Չեխիայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի հետ նորվեգացի մեծ կոմպոզիտոր Էդվարդ Գրիգի դաշնամուրի և նվագախմբի Կոնցերտի կատարումը: Համերգից առաջ տեղի ունեցավ երաժշտասերների հանդիպումն էստոնացի անվանի դիրիժոր Օլարի Էլտսի և Մարիաննա Շիրինյանի հետ: Համերգը նվիրված էր Չեխայի ռադիոյի 100-ամյակին, որին նվագախումբն անդրադարձավ համերգի առաջին բաժնում՝ կատարելով չեխ կոմպոզիտոր Լուկաշ Հուռնիկի այդ առիթով գրված «Ռադիո» սիմֆոնիկ ստեղծագործությունը, որն ընդգրկում էր չեխական և միջազգային հայտնի ստեղծագործությունների մեղեդիներ:

Է. Գրիգի՝ դաշնամուրի և նվագախմբի համար գրված Կոնցերտի կատարումը համերգի գագաթնակետն էր, թեև երկրորդ բաժնում դեռևս պետք է հնչեր Սիբելիուսի 5-րդ Կոնցերտը: Մարիաննա Շիրինյանը երաժշտական աշխարհում համարվում է այս Կոնցերտի լավագույն կատարողներից մեկը, եթե չասենք՝ լավագույնը: Եվ Գրիգի բնական ու սահուն ներկայացումը գրավեց խստապահանջ հանդիսատեսին, որն էլ պատասխանեց իր ծափողջույններով ու «բրավո»ներով: Համերգին նախորդած հանդիսատես-երաժիշտներ հանդիպմանը Մարիաննան չթաքցրեց, որ ներկայացնելու է Գրիգի իր մեկնաբանությունը, որ նորվեգական երաժշտությունը կարևոր տեղ ունի իր ստեղծագործական կյանքում: Նաև հիշեցնելով իր հայկական արմատների մասին, նա շեշտեց, որ գրիգյան հայրենաբաղձության մոտիվներն իրեն հիշեցնում են Հայաստանը՝ իր Հայրենիքի կարոտը: Այն հոգեհարազատ է իրեն, և խորհրդանշական է, որ այժմ բնակվելով Կոպենհագենում, իր տունը հեռու չէ այն շենքից, որտեղ ապրել և 24 տարեկանում այդ Կոնցերտը գրել է Գրիգը: Մեզ հետ զրույցում Մարիաննան ասաց. *«Իմ հոգում Գրիգի Կոնցերտը շատ կարևոր տեղ է գրավում: Ես այն նվագել եմ հաճախ և ունեմ շատ առանձնահատուկ կապ այդ գործի հետ: Տարիների ընթացքում իմ կապը Նորվեգիայի, այնտեղի երաժշտական ավանդույթների, ժողովրդական երաժշտության հետ շատ սերտացել է: Դա առանձնահատուկ մի լեզու է, որ սերտ կապ ունի Նորվեգիայի բնության և ավանդույթների հետ: Ինձ համար շատ հետաքրքիր մի անկյուն է, որ ես սիրով հետազոտել եմ: Ուրախ եմ ներկայացնել չեխական հանդիսատեսին այդ հրաշք կոնցերտը»:* Մեր կողմից ավելացնենք, որ ոչ միայն կոնցերտն էր հրաշք, այլև Շիրինյանի կատարումը: Այնպիսի տպավորություն էր, որ այդ գործի հեղինակը դաշնակահարն է:

Հայ դաշնակահարուհին իր գոհունակությունը հայտնեց նաև Չեխիայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի մասին: Մեզ հետ զրույցում նա խոստովանեց, որ Պրահայում նվագում է առաջին անգամ: *«Մեծ ուրախությամբ սպասում եմ իմ հանդիպմանը Չեխական ռադիոյի նվագախմբի և չեխական հանդիսատեսի հետ: Ունեմ չեխ երաժիշտ շատ ընկերներ և անչափ հարգում ու սիրում եմ չեխական երաժշտական ժառանգությունը: Չեխիայում տարիներ առաջ նվագել եմ Պլզենի սիմֆոնիկ նվագախմբի հետ՝ Գերշվինի «Rhapsody in blue»-ն»,* - ասաց նա:

Ավելացնենք, որ Մարիաննա Շիրինյանը ծնվել է Երևանում՝ երաժիշտների ընտանիքում, ավարտել է Չայկովսկու անվ. երաժշտական դպրոցը, մասնագիտական բարձրագույն կրթությունն ստացել է Գերմանիայում, ապա հաստատվել Դանիայում և ելույթներով հանդես է գալիս ոչ միայն Սկանդինավյան երկրներում, այլև աշխարհի տարբեր համերգային դահլիճներում: Ունի թողարկած բազմաթիվ ձայնասկավառակներ, դասավանդում է Օսլոյի երաժշտական ակադեմիայում, պրոֆեսոր է:

Ինչպես բնութագրում է Պրահայի համերգի առիթով տպագրված գրքույկը, Մարիաննա Շիրինյանը համարվում է Եվրոպայի ամենաստեղծարար և ամենափնտրված դաշնակահարներից մեկը: Նրա երաժշտականությունը և վիրտուոզ կատարումը, ինչպես նաև հոյակապ տեխնիկան վայել է իրական դասական երաժշտին:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

Պրահա

https://azg.am/culture/%d5%a5%d5%be%d6%80%d5%b8%d5%ba%d5%a1%d5%b5%d5%ab-%d5%a1%d5%b4%d5%a5%d5%b6%d5%a1%d5%bd%d5%bf%d5%a5%d5%b2%d5%ae%d5%a1%d6%80%d5%a1%d6%80-%d5%a5%d6%82

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

«ՄԻՆԻՄԱԼԻԶՄԸ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ»

Մարտի 11-ին, ԵՊԿ ուսանողների ուժերով կայացավ երաժշտական մինիմալիզմը ներկայացնող հեղինակների ստեղծագործություններից բաղկացած թեմատիկ համերգը: Ծրագրի մասնակից թավջութակահար Հենրի Երկանյանը համոզված է. *«Այս ոճի երաժշտության կատարումը շատ կարևոր իրադարձություն էր բոլոր մասնակիցների համար: Ժամանակակից երաժշտությունը դասական երկացանկից ոչ պակաս պետք է հնչի ուսանողների մեկնությամբ. դա մի այլ հետաքրքրություն է՝ նվագել քեզ ժամանակակից մեծավաստակ կոմպոզիտորների գործերը»:* Կատարողների անունից նա շնորհակալություն է հայտնել կոմպոզիտոր Ռալֆ Քէօշկէրեանին, որ՝ նման նվիրվածությամբ ու սիրով իր գործի հանդեպ, վստահեց ուսանողներին ու կազմակերպեց այս համերգը. *«Մտահորիզոնս ավելի լայնացավ»,* - շեշտել է Հենրի Երկանյանը: Կատարումներով հանդես կան՝ Թերեզա Մարկոսյանը, դաշնամուր, Մարգարիտ Ասատրյանը, դաշնամուր, Իվանե Եսայանը, ջութակ, Արթուր Մուրադյանը, ջութակ, Նարե Թորոսյանը, ալտ, Հենրի Երկանյանը, թավջութակ, Ասյա Ջանունցը, ֆլեյտա, Դավիթ Գրիգորյանը, սաքսոֆոն, Ռալֆ Քէօշկէրեանը, համերգի համակարգող:

Ռալֆ Քէօշկէրեան

Իվանե Եսայան, Հենրի Երկանյան, Արթուր Մուրադյան, Դավիթ Գրիգորյան

Մինչհամերգային լուսանկարները՝ Սիփան Արծրունու

Ասյա Ջանունց, Նարե Թորոսյան

ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍ, ՀԱՆԴԻՊՈՒՄ

✔ Մարտի 14-ին իր հարազատ կոնսերվատորիայի մասնագիտական դաշնամուրի ամբիոնի ուսանողների հետ վարպետության դաս անցկացրեց ԵՊԿ շրջանավարտ, գերմանաբնակ դաշնակահար Լիլիթ Գրիգորյանը:

Լուսանկարը՝ Հասմիկ Համբարյանի

Լիլիթ Գևորգյանի վարպետության դասին

Նա դասավանդում է Ռոստոկի երաժշտության և դրամայի համալսարանում և Ռոստոկի երիտասարդական ակադեմիայում: Նա ժամանակակից դաշնամուրային արվեստի մեծերից մեկի՝ Մարիա Ժոաո Պիրեշի մասնագիտական ժառանգության կրողն է: Ուսուցիչն այսպես է բնութագրել մեր հայրենակցին. «Լիլիթն առանձնանում է իր հզոր ուժով և հստակ, հաստատուն երաժշտական լեզվով»:

Դաշնակահարուհի Լիլիթ Գրիգորյանն իր սերնդի ճանաչված արտիստներից է: Մամուլը բարձր է գնահատել նրան՝ ընդգծելով «իր տարիքի համար անսովոր հասուն կատարումները» *("BBC Music Magazine")* և անվանելով նրան «պայծառ կետ դաշնամուրային կատարողականության ասպարեզում» *("MDR Kultur")*: Հյուրախաղերով շրջագայել է 30-ից ավելի երկրներում, ելույթներ ունեցել *Konzerthaus* (Բեռլին), *Elbphilharmonie, Laeiszhalle* (Համբուրգ), *Philharmonie* (Էսսեն), *Gasteig* (Մյունխեն), *Concertgebouw* (Ամստերդամ), *Great Hall of Mozarteum* (Զալցբուրգ), *Philharmonie de Paris, Salle Cortot, Cité de la Musique* (Փարիզ), *Halle aux Grains* (Թուլուզ), *BOZAR, Flagey* (Բրյուսել), *Palau de la Música Catalana* (Բարսելոնա), *Auditorio Nacional de Música* (Մադրիդ), ինչպես նաև Նյու Յորքի, Լոնդոնի, Համբուրգի Steinway Hall-ի դահլիճներում: Հանդես է եկել *Schleswig Holstein, Mecklenburg-Vorpommern, Verbier, Krzyzowa, Gezeitenkonzerte, Kultursommer Nordhessen, Auvers-sur-Oise, Colmar, Menton, Midis-Minimes* և այլ հեղինակավոր փառատոներում:

2012 թ. թողարկվել է Լիլիթ Գրիգորյանի դեբյուտային ձայնասկավառակը *(Disc AuverS)* Դ. Սկառլատտիի, Ռ. Շումանի, Բ. Բարտոկի և Ա. Խաչատրյանի ստեղծագործություններով, իսկ 2018-ին՝ *"Variations Sérieuses" (Orchid Classics)* մենանվագ ձայնասկավառակը՝ Բախ-Բուզոնիի, Լ. վան Բեթհովենի, Ֆ. Մենդելսոնի, Ժ. Բիզեի և Կ. Շիմանովսկու վարիացիաներով: Թողարկվել են նաև կամերային երաժշտության ձայնասկավառակներ ջութակահար Սառա Քրիստիանի (2017, *Genuin*), ալտահարներ Հիյուլի Տոգավայի (2018, *Naxos*), Կարոլինա Էրերայի (2022, *Genuin*) հետ:

Ֆրեդերիկ Մոմպաուի *"Música Callada"* («Լռության երաժշտություն») դաշնամուրային շարքի ձայնասկավառակը թողարկվել է 2021թ. *(Orchid Classics)* և ընդգրկվել *Apple Music*-ի 2021թ. լավագույն ալբոմների շարքում:

Լիլիթ Գրիգորյանը ծնվել է Երևանում: Ուսանել է Արքուհի Հարությունյանի, Սերգեյ Սարաջյանի, Մաթիաս Կիրշներայթի մասնագիտական դասարաններում: 2012-2016 թթ. Լիլիթ Գրիգորյանը կատարելագործվել է Բելգիայում *(Chapelle Musicale Reine Elisabeth)* լեգենդար Մարիա Ժոաո Պիրեշի ղեկավարությամբ: Այդտեղից էլ սկսվել է սերտ համագործակցությունը Մարիայի հետ և մասնակցությունը նրա տարբեր նախագծերին: Որպես կամերային երաժիշտ՝ համագործակցում է նաև Կլաուդիո Բոհորկեսի (թավջութակ), Վալերի Սոկոլովի (ջութակ), Դավիդ Պետերսենի (ֆագոտ) և ուրիշների հետ: Լ. Գրիգորյանը միջազգային մրցույթների բազմակի դափնեկիր է, նաև՝ ՀՀ Նախագահի մրցանակակիր (2008 թ.): 2023 թ. ապրիլից ներկայացնում է որպես *Yamaha*-ի արտիստ: Ներկայում դասավանդում է Ռոստոկի երաժշտության և թատրոնի բարձրագույն դպրոցում:

✔ Մարտի 20-ին կայացավ միջազգային մրցույթների դափնեկիր, *UCLA Herb Alpert*-ի պրոֆեսոր, *UCLA* հայկական երաժշտական ծրագրի հիմնադիր-խորհրդատու, անվանի ջութակահար, ԵՊԿ շրջանավարտ Մովսես Պողոսյանի հետ հանդիպումը՝ մասնակցությամբ Կոմպոզիցիայի ամբիոնի վարիչ Վաչե Շարաֆյանի, Ուսումնական գծով պրոռեկտոր, կոմպոզիտոր Արամ Հովհաննիսյանի:

Առիթը՝ «Սերենադ խատուտիկի հետ» 4 ձայնասկավառակից բաղկացած ժողովածուն էր, որը լույս է տեսել 2024 թվականի հունվարին: Այն Մովսես Պողոսյանի (նախագծի ղեկավար-ջութակահար) կատարողական, մշակութային

Մովսես Պողոսյան, Վաչե Շարաֆյան, Արամ Հովհաննիսյան
Լուսանկարը՝ Շուշան Այվազյանի

բազմակողմանի գործունեության կարևոր ծրագրերից մեկն է: Այստեղ արտացոլված են հայ կամերային երաժշտության գրեթե մեկ դարյա ընդգծված նշանակությամբ օրինակներն ու պրեմիերային ստեղծագործությունները, որտեղ ներկայացված է հայ երաժշտության խորությունն ու լայնությունը:

Ձայնասկավառակի մեկ օրինակ փոխանցվեց ԵՊԿ ձայնադարանին:

✔ «XX դարի հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ»

Կամերային գործիքային երաժշտությունն ստեղծագործական ու կատարողական արվեստում առանձնահատուկ ազդեցություն ունի, այն վարպետության դպրոց է ու նոր գաղափարների, արտահայտչամիջոցների ամենալուրջ ասպարեզ:

Մարտի 23-ին, Երևանի կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Կամերային գործիքային անսամբլի ամբիոնի դասախոսները և ուսանողները՝ պրոֆեսոր Իրինա Բադալյանի ղեկավարությամբ ներկայացան հայ կոմպոզիտորական ժառանգության համայնապատկերով:

Համերգը կարևոր էր հայրենական հեղինակների անուններն ու ստեղծագործությունները կատարելու նշանակությամբ: Ուսանողները հնարավորություն ունեցան հնչեցնել տարբեր սերնդի կոմպոզիտորների զգացումների տրամադրությունը, կարողանալ հաղորդվել հարազատ գեղարվեստական արտահայտման հետ:

Հետաքրքիր էին յուրաքանչյուր դասախոսի առանձնահատուկ ձեռագրերը, ինչպես օրինակ՝ ակադեմիական ու ինտելեկտուալ հեղինակների ժառանգությունը հանրահռչակող պրոֆեսոր՝ Իրինա Բադալյանը, դասական անունների երկերում իր ժամանակի ռիթմն ու ավյունը միշտ ներբերող՝ պրոֆեսոր Ալիսա Արզումանյանը, գեղարվեստական ու պոետիկ շերտերին հարազատ՝ պրոֆեսոր Ջուլիետա Խաչատրյանը, մշտապես նոր օպուսներով ուսումնական երկացանկը լրացնող՝ դասախոս Ջուլիետտա Վարդանյանը, կոմպոզիտորական ու կատարողական հարթություններում երկխոսության կարևոր մշակույթին հավատարիմ՝ պրոֆեսոր Վաղարշակ Պեպանյանը, կամերային երաժշտության մշակույթի մասշտաբայնությունն ընդգծող՝ պրոֆեսոր Գայանե Հովհաննիսյանը:

Համերգը մեկնարկեց ծրագրին մասնակից դաշնակահար Շուշան Արևշատյանի Սկերցոյով, որն ուսանողն գրել է կոմպոզիցիայի ֆակուլտատիվ դասընթացի շրջանակներում՝ Արամ Հովհաննիսյանի ղեկավարությամբ: Ստեղծագործությունը 2024 թվականին *"Classical Musical Stars"* միջազգային երաժշտական մրցույթի (Վարշավա) «Կոմպոզիցիա անվանակարգի Արծաթե» մրցանակակիր է:

Կամերային երաժշտությունն ուսանողների մոտ կարևոր հրամայական է առաջադրում. ներկայանալ լարային գործիքների մեծ զինանոցով, ինչպես օրինակ Գրիգոր Հախինյանի ու Գագիկ Հովունցի գործերում: Հետաքրքիր էր կոմպոզիտորի ապրած ժամանակի այսօրվա իրականության հետ զուգահեռը, օրինակ՝ Ավետ Տերտերյանի, Գայանե Չեբոտարյանի ստեղծագործություններում: Ընկալելի էր Ալեքսանդր Հարությունյանի դաշնամուրային Տրիոյում գործիքային դասականության ու երգայնության նրբին եզրերը փոխլրացնելու կարողությունը: Անշուշտ առանձնահատուկ հարազատ խանդավառությամբ էին կատարում ժանրային հիմքով ծնված օպուսները (Ստեփան Ջրբաշյան, Էդգար Հովհաննիսյան, Էդուարդ Խաղագործյան), որտեղ երգը, խմբապարի մոտորիկան, ահազանգող երթ-ընթացքը պատանի երաժիշտներին սեփական ներաշխարհն արտացոլելու միջոցներ էին:

Համերգային ծրագիրն էր.

Շուշան Արևշատյան - Սկերցո (կատ.՝ Արուսյակ Արևշատյան - ջութակ, 3-րդ կուրս, Շուշան Արևշատյան, դաշնամուր, 3-րդ կուրս, ղեկավար՝ պրոֆեսոր Ալիսա Արզումանյան)

Գագիկ Հովունց - «Դուետ», 3-րդ մաս (կատ.՝

11

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Լուսանկարը՝ Հասմիկ Համբարյանի

ԵՊԿ Կամերային գործիքային անսամբլի ամբիոնի դասախոսները և ուսանողները՝ պրոֆեսոր Իրինա Բադալյանի ղեկավարությամբ ներկայացան համերգով

10

Մարիամ Գաբուճյան, ջութակ, 3-րդ կուրս, Արեն Ամիրյան, դաշնամուր, 3-րդ կուրս, ղեկավար՝պրոֆեսոր Իրինա Բադալյան)

Ավետ Տերտերյան - «թավջութակի և դաշնամուրի Սոնատ» (Հովիկ Օգանեզով՝ թավջութակ, ուսումնական ասիստենտ, Թերեզա Մարկոսյան, դաշնամուր, 3-րդ կուրս, ղեկ.՝ պրոֆեսոր Ջուլիետա Խաչատրյան),

Գրիգոր Հախինյան - դաշնամուրային Տրիո, 3-րդ մաս (Ֆուգա) (Շուշան Արևշատյան, դաշնամուր, 3-րդ կուրս, Արուսյակ Արևշատյան - ջութակ, 3-րդ կուրս, Հովիկ Օգանեզով, թավջութակ, ուսումնական ասիստենտ, ղեկ.՝ պրոֆեսոր Ալիսա Արզումանյան),

Գայանե Չեբոտարյան - դաշնամուրային Տրիո (Նինա Ղահրամանյան, դաշնամուր, 2-րդ կուրս, Ջուլիա Ավետիսյան, ջութակ, 3-րդ կուրս, Աշոտ Ղարիբյան, թավջութակ, 3-րդ կուրս, ղեկավար պրոֆեսոր Իրինա Բադալյան, դոցենտ՝ Քրիստինե Իսկանդարյան)

Ստեփան Էլմաս - դաշնամուրային Տրիո, 1-ին մաս (Մեհրշադ Զիաբարի, դաշնամուր, 3-րդ կուրս, Անահիտ Իվանյան, ջութակ, 2-րդ կուրս, Անահիտ Շահինյան, թավջութակ, 3-րդ կուրս, ղեկավար՝ դասախոս Ջուլիետա Վարդանյան),

Ալեքսանդր Հարությունյան - Կլառնետի ջութակի և դաշնամուրի Տրիո (3-4-րդ մասեր) (Հովհաննես Զիրոյան, կլառնետ, մագ. 1-ին կուրս, Արևիկ Մելքոնյան, ջութակ, 4-րդ կուրս, Էլեն Հարությունյան, մագիստրոսական 1-ին կուրս, ղեկավար պրոֆեսոր Իրինա Բադալյան)

Ստեփան Զրբաշյան - դաշնամուրային Կվինտետ, 2-րդ մաս, (Մարինե Մկրտչյան, դաշնամուր, 4-րդ կուրս, Նորայր Մաղաքայն, ջութակ, 3-րդ կուրս, Մարիաննա Քոչարյան, ջութակ, 4-րդ կուրս, Սառա Հարությունյան, ալտ, 4-րդ կուրս, Սուսաննա Մուրադյան, թավջութակ, ուսումնական ասիստենտ, ղեկավար՝ պրոֆեսոր Ալիսա Արզումանյան)

Էդգար Հովհաննիսյան - դաշնամուրային Կվինտետ, 2-րդ մաս (Վերժինե Էլյազյան, դաշնամուր, մագիստրոսական 1-ին կուրս, Սյուզաննա Ասատրյան, ջութակ, 3-րդ կուրս

Անուշ Մարգարյան, Մարգարյան, ջութակ, մագգ 1-ին կուրս, Լյուդմիլա Հովհաննիսյան, ալտ, մագգ 1-ին կուրս, Սուսաննա Մուրադյան, թավջութակ, ուսումնական ասիստենտ, ղեկավար՝ պրոֆեսոր Գայանե Հովհաննիսյան)

Էդուարդ Խաղագործյան՝ դաշնամուրային Կվինտետ, 4-րդ մաս (Ալեքսանդրա Մնացականյան, դաշնամուր, 4-րդ կուրս, Էլեն Մամիկոնյան, ջութակ, 4-րդ կուրս, Անուշ Մարգարյան, ջութակ, մագիստրոսական 1-ին կուրս, Լյուդմիլա Հովհաննիսյան, ալտ, մագիստրոսական 1-ին կուրս, Սուսաննա Մուրադյան, թավջութակ, ուսումնական ասիստենտ, ղեկավար՝ պրոֆեսոր Գայանե Հովհաննիսյան):

https://www.facebook.com/YerevanStateConsevatory

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի 15-րդ «Հայ ֆեստ» փառատոնի բացումն Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում

«Հայֆեստի» (փառատոնի անոնսի մասին տես՝ նույն ամսաթերթի էջ՝ 10) մեկնարկն էր՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի և ՀԿՄ համատեղ կազմակերպմամբ առաջին համերգը՝ նվիրված Ավետ Տերտերյանի ծննդյան 95-ամյակին: Այն տեղի ունեցավ մարտի 19-ին՝ Իրինա Տիգրանովա-Տերտերյանի ծննդյան օրը, որի մասին հիշեցրեցի շնորհաշատ և նրանց հիշատակը մշտապես պահպանող Սերգեյ Սմբատյանին: Իրինա Տիգրանովան միշտ ասում էր, թե Ավետ Ռուբենովիչն ամեն ինչը ղեկավարում է ի վերուստ:

Ու արտակարգ հետաքրքիր մեկնաբանումով հնչեց կոմպոզիտորի 3-րդ Սիմֆոնիան և պետք է նշենք, որ այս Սիմֆոնիան Սերգեյ Սմբատյանը մի քանի անգամ է, որ կատարում է սկսած կոմպոզիտորի ծննդյան հոբելյանական 75-ամյակից և յուրաքանչյուր անգամ նորովի թարմ ու նուրբ մեկնաբանմամբ: այս անգամ համերգի ժամանակ այնքան միածույլ և բնական էր հնչում զուռնան և դուդուկը դասական սիմֆոնիկ նվագախմբի տեմբրային հնչողության հետ:

Համերգի սկզբում հնչեցին Ալեքսանդր Հարությունյանի «Տոնական» նախերգանքը և տուրք տալով արտերկրից հրավիրված մեր մշակույթը տարածելու միտումով, աղջնակ կատարողի՝ Սելինա Օտտի մեկնաբանմանը շեփորի աշխարհահռչակ իր փայլուն կատարող վարպետներով Կոնցերտը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, դիրիժոր Սերգեյ Սմբատյան

ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ԵՊԿ 2-րդ կուրսի քանոնահար **Լաուրա Թորոսյանը,** 2023 թ., դեկտեմբերի 15-ին *«The North International Music Competition»* օնլայն մրցույթի «Քանոն» անվանակարգում, վաստակելով 100-ից 90 միավոր, ստացել է Առաջին մրցանակ:

ԵՊԿ 2-րդ կուրսի քանոնահար **Արևիկ Ներկարարյանը,** 2023 թ., հոկտեմբերի 13-ին *«World Art Games»* արվեստի միջազգային մրցույթում օնլայն մրցույթի 20-25 տարեկան տարիքային խմբի «Գործիքային կատարողականություն» անվանակարգում, վաստակելով 100-ից 98 միավոր, համալրել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի մրցանակակիրների շարքը՝ առաջին տեղի դիպլոմով:

ԵՊԿ 4-րդ կուրսի քանոնահար **Մանուշակ Նաղդալյանը,** փետրվարի 29-ին *«American edition»* օնլայն մրցույթի 20-25 տարեկան տարիքային խմբի «Գործիքային կատարողականություն» անվանակարգում, վաստակելով 100-ից 98 միավոր, ստացել է առաջին մրցանակի դիպլոմ:

https://www.facebook.com/YerevanStateConsevatory

ԵՐԱԺԻՇՏ ամսաթերթում կարդացեք նոր էջ.
«ՀԱՅԿՅԱՆ ԴԻՑԵՐ»
մտահղացումը՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆԻ

ՀԱՅԿՅԱՆ ԴԻՑԵՐ՝ ՏԻՐ դպրության, պերճախոսության,

Գիտությունների ու արվեստների աստվածը հին հայկական դիցաբանության մեջ

Տիրը դպրության, պերճախոսության,գիտությունների ու արվեստների աստվածը հին հայկական դիցաբանության մեջ համարվել է Արամազդ աստվածահոր ատենադպիրն ու սուրհանդակը, մարդկանց ճակատագրի գուշակ ու երազների մեկնիչ, նրանց չար ու բարի գործերի գրանցողը, ննջեցյալների հոգիները «անդրշիրիմյան աշխարհ» ուղեկցողը: Նա մի ամբողջ ամիս զբաղվում էր մարդկանց ծնունդներն ու մահերն իր մատյանում գրանցելով, մնացած տասնմեկ ամիսներն արարչագործության ավիշ էր ներարկում գրողներին, երաժիշտներին, պատկերահաներին (նկարիչներին) և քարագործ-ճարտարապետներին:

Տիր աստծուն Արիական գաղտնագիտության մեջ համապատասխանել է եթեր տարերքը, ինչը խորհրդանշել է գիտելիքը և մարմնավորվել է երկնային ոլորտով: Այն ժամանակակից գիտության մեջ ունի Իոնոլորտ անվանումը:

Տիրին նվիրված գլխավոր կաճառը կոչվել է Երազամույն կամ Զվարթնոց, այն այսօր կոչվում է Զվարթնոց: Երազամույն բառը կազմված է «երազ» արմատից, «ա» հոդակապից և «մույն» արմատից, ինչը նշանակում է՝ վայելչություն: Երազամույն նշանակում է երազների վայելք: Տիրի կաճառ է եղել նաև Այրիվանքը՝ ժամանակակից Գեղարդավանքը: Վանական համալիրի հարող քարանձավները, ուր ուխտավորները, երազանք պահելով, փորձում են քարեր նետել, Տիրի պաշտամունքի մնացուկներն են և ուղղակիորեն վկայում են այնտեղ ժամանակին Տիրի կաճառի գոյության մասին:

Տիրի կաճառ է եղել նաև Մեծամորում, Քարահունջում, Տաթևի և Հաղպատի տեղում: Տիրին նվիրված նշանավոր կաճառ կար Արևմտյան Հայաստանի Մշո Սուրբ Կարապետ վանքի տեղում: Տիրի կաճառ եղել է նաև Սոսյաց անտառում՝ Արմավիր մայրաքաղաքի մոտ, որտեղ բնապաշտ քրմերը բնության երևույթներն են ուսումնասիրել, աստղագիտությամբ զբաղվել:

Տիր դից-աստծո տոնահանդեսը՝ Տիրական: Հայոց հին տոմարի 4-րդ ամիսը Տիրի անունով կոչվել է Տրե կամ տրի, ծիածանը՝ Տիրական կամ Տրական գոտի: Նրա անունով են կոչվել Տիրինկատար լեռը, Տիրակատար քաղաքը, Տրե և Տիրառիճ գյուղերը, ինչպես նաև մի շարք անձնանուններ (Տիրան, Տիրոց, Տրդատ): Տիրը մշակույթում - Տեառնընդառաջ տոնը Բնապաշտական Կրոնում նվիրված է եղել Տիր աստծուն և կոչվել է Տրնտես (Տիրին տեսության): Նրա անվան հետ է կապված «Գրողի տարած», «գրողի ծոցը» արտահայտությունները: Չե՞ք կարծում, որ այս արձանիկի մտահղացմանը շատ մոտ է Ս. Փարաջանովի ծննդյան 100-ամյակի առթիվ բացված արձանը: Եթե, այո, գրեք Ձեր մտորումները խմբագրության հասցեով սիրով կհրատարակենք և ո՞վ է այս արձանի հեղինակը:

ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ

Նյութը
https://www.facebook.com/photo/?fbid=2055794021468820&set=pcb.770766661428143 էջից

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ երաժշտարվեստի գեղոնների՝ օրորերգության նմուշների նոր «կյանքը»

1 Հայկական հին, ներկայում՝ հազվադեպ կատարվող կամ միայն բանահավաքչական նյութերում պահպանված օրորոցայինների՝ երկու տասնյակից ավելի գեղոնների հավաքածու է առանձին խտասալիկով ներկայացրել օպերային մեներգչուհի, ՀՀ վաստակավոր արտիստ, Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դասախոս Մագդա Մկրտչյանը: Սա երգչուհու իրականացրած ծագրերից հերթականն է: Նախորդիվ նա երևանյան հանդիսականի առջև հանդես էր եկել իսպանական երգարվեստի՝ մեզանում երբևէ չհնչած ստեղծագործությունների կատարմամբ, և այդ համերգային երեկոյին նաև անդալուզյան օրորոցային էր հնչել: Հերթը հիմա հայկականներինն էր:

Եթե ուզում ես բացահայտել որևէ ժողովրդի հոգու ծալքերը, լեզվամտածողության ինչ-ինչ շերտեր, լսիր նրա աշխատանքային երգերն ու օրորոցայինները, որոնցում խտացված են երջանկության, սիրո, կյանքի ճշմարտության և երազների միահյուս պատկերացումները՝ մեղեդիների ու խոսքի ներդաշնակ հյուսքերով: Մինչ օրորոցայինների այս հավաքածու - խտասալիկի լույսընծայումն ինձ հայտնի էր մեր հորովելների չքնաղ նմուշները վերջին տարիներին հետևողականորեն բացահայտելու, մշակելու հանգամանքը: *«Մարդկային մի կյանքը բավական չէ այդ ամբողջ հարստությունն ամբողջապես մշակելու համար»,* - տարիներ առաջ մեր զրույցներից մեկին փաստել է մաեստրո Սեդրակ Երկանյանը: Ըստ տարածաշրջանների՝ հորովելները «քարտեզագրելու» նրա հետևողական ջանադրության շնորհիվ այսօր հայ բեմից հնչում են հայ հնագույն երաժշտարվեստի գանձարանի թանկարժեք նմուշներ: Հենց նույն գանձարանից է Մագդա Մկրտչյանը քաղել օրորոցային երգերը, որոնք, ենթադրում եմ, նույնպես մեծ քանակ են կազմում, բովանդակությամբ և զգացմունքի տարողությամբ նույնքան խորն ու լեցուն են, և ուրեմն, վաղուց է հասունացել դրանց «երկրորդ շնչառություն» տալու, բեմ բարձրացնելու, հայ հանրության սեփականությունը դարձնելու, նաև օտարազգիներին մեր արվեստի դարավոր արմատները ցուցանելու պահանջը: Արդի հայ հանրության գեղագիտական ճաշակը վերափոխելու, վերածնելու ուղիղ ճանապարհը հենց մեր երաժշտարվեստի մաքրամաքուր աղբյուրներից բխող մեղեդահյուսքերը, բանարվեստը հանրամատչելի դարձնելն է, և շնորհակալ է նրանց գործը, ովքեր հանդես են գալիս այդ առաքելությամբ:

Երբ Մագդա Մկրտչյանը ձեռք էր մեկնում հայկական

«Հայկական օրորների գանձարան» խտասալիկը

օրորոցայինների նյութի ուսումնասիրությանը, չէր էլ պատկերացնում, թե որքան ծավալուն նյութ կհայտնաբերի իր համար: Հիմա, երբ արդեն իր երգացանկում հինգ տասնյակ օրորներ ունի, խոստովանում է, որ ամեն անգամ զարմանք և հիացմունք է ապրել՝ հերթական երգը «պեղելիս»: Չէ որ դրանց խոսքն ու մեղեդին հորինել են հասարակ գեղջկուհիները, հայ մայրերը, և դրանցից յուրաքանչյուրն արվեստի գործ է՝ մնայուն և անկրկնելի: *«Ժողովրդի տաղանդի, շնորհի արտահայտություններ են, որոնց մեջ խտացված են մեր պատմությունը, կենցաղավարության դրվագները, տվյալ անձի տրամադրությունը, հույզն ու հոգսը, որոշ դեպքերում՝ տագնապները, մի այլ դեպքում՝ խաղաղ հրճվանքը և այլն,* - ասում է երգչուհին: - *Օրորները նաև մեր պատմությունն ուսումնասիրելու յուրատիպ ուղեցույց են. դրվագ առ դրվագ, պատկեր առ պատկեր հասկանում ես այն ժամանակաշրջանը, որում ապրել են այդ օրորներն արարողները: Խոսուն են ծնողի՝ իր զավակին տրված պատգամները, առաջին հայացք՝ պարզ, բայց այնքան զգայացունց, բազմանշանակ են քնքշանքի արտահայտությունները: Շարունակում եմ աշխատանքը Կոմիտասի օրորներն ամբողջականորեն ներկայացնելու ուղղությամբ, շարունակելու եմ օրորոցայինները «պեղելու» և դրանցով հայեցի դաստիարակություն տալու իմ աշխատանքը: Դրանք արդեն իսկ ուսուցողական նյութ են դարձել Անահիտ Ցիցիկյանի անվ. երաժշտական դպրոցում, որտեղ ուսուցանում եմ:*

Օրորներում երբեմն նորարարություններ եմ ներմուծում: Օրինակ, Ակնի օրորում մենախոսում եմ՝ դրանով խորացնելով ստեղծագործության հուզականությունը, հզորացնելով հանդիսականին հաղորդվող զգացմունքային լիցքը: Սկսյալ անհիշելի ժամանակներից՝ միշտ և ամենուրեք, որտեղ եղել է ծնունդ և օրոցք, հնչել է օրորոցային երգը, որով հայ կինն իր սիրասուն մանկան գովքն է արել, արտահայտել իր սերն ու գորովը»:

Մագդա Մկրտչանի հետ զրույցին տեղեկացա, որ «Հայկական օրորների գանձարան» խտասալիկով ներկայացնում է պատմական Հայաստանի տարբեր բնակավայրերը՝ Տարոնը, Վանը, Սասունը, Շատախը, Ակնը, Մոկսը և այլն: Ինձ համար նորություն էր, որ օրորներ երգել են նաև պապերը: Դրանցից է Սասնա օրորը.

«Ռուրի գենիմ՝ դու զորենաս,
Դու պըզդիկ իս, բարով մեծնաս:
Ռուրի գենիմ, իմ պըզդիկին,
Անդրանիկի քաջ զինվորին:
Հարավ քամին գքի օրորը,
Ռուրի, ռուրի, ռուրի, լա՛ռ:
Վերին Աստված, կարմիր արև,
Զքի հով էնը, ռուրի, լա՛ռ»:

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Գրող, լրագրող

https://azg.am/culture/%d5%b0%d5%a1%d5%b5-%d5%a5%d6%80%d5%a1%d5%aa%d5%b7%d5%bf%d5%a1%

ՆՈՐ ՉԱՅՆԱՍԿԱՎԱՌԱԿ

Լույս է տեսել «Չաուշյան մրցանակ 2023» առաջին բուհական մրցույթի ձայնասկավառակը:

Մրցույթը, որին մասնակցել են ԵՊԿ Կոմպոզիցիայի ամբիոնի և կոմպոզիցիայի ֆակուլտատիվ դասընթացների ուսանողները, նախաձեռնել էին դաշնակահար, Մենուհինի Միջազգային Երաժշտական Ակադեմիայի դասախոս Անահիտ Չաուշյանը և ԵՊԿ ուսումնական գծով պրոռեկտոր, կոմպոզիտոր Արամ Հովհաննիսյանը:

Մենանվագ դաշնամուրի համար գրված ստեղծագործությունները կատարում են Մասնագիտական դաշնամուրի ամբիոնի ուսանողները, ինչպես նաև ԵՊԿ կոնցերտմայստեր:

Հանձնախմբի կազմում էին Մոսկվայի Պ. Ի. Չայկովսկու անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր, կոմպոզիտոր Յուրի Կասպարովը, Բրագայի Մինյո համալսարանի պրոֆեսոր, կոմպոզիտոր Պեդրո Յունկեյրա Մայան (Պորտուգալիա), կոմպոզիտորներ Անդրիուս Արությունյանը (Լիտվա/Հոլանդիա), Արսեն Բաբաջայանը (Գերմանիա) և դաշնակահար Անահիտ Չաուշյանը (Մեծ Բրիտանիա):

Ստեղծագործությունների առաջին կատարումները հնչել են 2023 թվականին դեկտեմբերի 18-ին ՀԲԸՄ համերգասրահում: Ձայնագրությունը կատարվել է ԵՊԿ Ակուստիկ լաբորատորիայում, հնչյունային ռեժիսոր՝ Սերգեյ Ումրոյան:

Նշենք, որ ալբոմը կներառվի *Spotify*-ում: Ձայնասկավառակում ընդգրկված են ինչպես մասնակցության հայտ ներկայացրած, այնպես էլ դափնեկիր ստեղծագործությունները:

Առաջին մրցանակ. 1. Միքայել Վարդանյան՝ *Ballade* (4-րդ կուրս, ղեկավար՝պրոֆեսոր Ստեփան Ռոստոմյան, կատ.՝ Մերի Շարբաթյան (2-րդ կուրս, ղեկավար՝ պրոֆեսոր Սերգեյ Սարաջյան))

2. Կարեն Սարջանյան՝ *Toccata* (4-րդ կուրս, ղեկավար՝ պրոֆեսոր Երվանդ Երզնկյան, կատ.՝ Լիլիթ Մարտիրոսյան (2-րդ կուրս, ղեկավար՝պրոֆեսոր Վաղարշակ Հարությունյան)),

Երկրորդ մրցանակ. 1. Լեոն Պողոսյան՝ *Landscapes of my hometown* [3-րդ կուրս, ղեկավար՝ Արամ Հովհաննիսյան, կատ.՝ Թերեզա Մարկոսյան (3-րդ կուրս, ղեկավար՝ պրոֆեսոր Սերգեյ Քեչեկ)],

2. Դիբա Փիշդադի՝ *Klavierstuck* (ֆակուլտատիվ 1-ին տարի, ղեկավար՝ Արամ Հովհաննիսյան, կատ.՝ ԵՊԿ կոնցերտմայստեր Գայանե Ասլանյան),

3. Մերի Գրիգորյան՝ *Piece foe piano* [1-ին կուրս, ղեկավար՝ դոցենտ Վաչե Շարաֆյան, կատ.՝ Մարիամ Հովհաննիսյան (1-ին կուրս, ղեկավար՝ պրոֆեսոր Զեմֆիրա Բարսեղյան)],

Երրորդ մրցանակ. 1. Շուշան Արևշատյան՝ *Extasis* (ֆակուլտատիվ 3-րդ տարի, ղեկ.՝Արամ Հովհաննիսյան, կատ.՝ Նարե Սուքիասյան (մագիստրոսականի 1-ին կուրս, ղեկավար՝ պրոֆեսոր Վաղարշակ Հարությունյան),

2. Անդրեյ Կուրբետ՝ *Intermezzo* [ֆակուլտատիվ 4-րդ տարի, ղեկավար՝ պրոֆեսոր՝ Միխայիլ Կոկժան, կատ.՝ Անդրեյ Կուրբետ (4-րդ կուրս, ղեկավար՝ պրոֆեսոր Կարինե Օհանյան)],



3. Ռալֆ Քէօշքէրեան՝ *Piano Reflection* [3-րդ կուրս, ղեկավար՝ Արամ Հովհաննիսյան, կատ.՝ Մարգարիտ Ասատրյան (մագիստրոսականի 2-րդ կուրս, ղեկավար՝ պրոֆեսոր Կարինե Օհանյան)],

4. Էրիկա Մարկոսյան՝ *Waltz of the bats* (4-րդ կուրս, ղեկավար՝ Արամ Հովհաննիսյան, կատ.՝ Լև Առուշանյան (մագիստրոսականի 2-րդ կուրս, ղեկավար՝պրոֆեսոր Կարինե Օհանյան),

Պատվավոր մրցանակ. Արմեն Գևորգյան՝ *Oxymoron* [2-րդ կուրս, ղեկավար՝ Արամ Հովհաննիսյան, կատ.՝ Մերի Շարբաթյան (2-րդ կուրս, ղեկ.՝պրոֆեսոր Սերգեյ Սարաջև)]:

https://www.facebook.com/YerevanStateConsevatory

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈՌԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՋՅԱՆ, ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ

Թողարկման պատասխանատու՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ

Խմբագիրներ՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ (հայ. լեզու)
ՍՈՖԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (ռուս. լեզու)

Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.

Ծավալը 12 էջ: Ստորագրված է 29.04.2024:
Գինը 200 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (http://yksclabrary.am/ conservatory.am): Այլ ԶԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (http://yksclabrary.am/ conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am, http://yksclabrary.am/
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/